



**ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ  
վերաբերմունքը, ատելություն  
խոսքի դրսևորումները ու նրանց  
իրավունքների ոտնահարումը ՀՀ  
առցանց տիրույթում**

# **ՁԵԿՈՒՅՑ #3**



Սույն գեկոյցը պատրաստել է «Նոր Սերունդ»  
Մարդասիրական Հասարակական Կազմակերպության  
Կողմից Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի  
ֆինանսական աջակցությամբ:

**Հակիրճ անվանացանկ**

**ՀՀ** Հայաստանի Հանրապետություն

**ԼԳՏԲԻ** Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս

**ՉԼՄ** Չանգվածային լրատվական միջոց

**ՀԿ** Հասարակական կազմակերպություն

**ՀՀԿ** Հայաստանի հանրապետական կուսակցություն

**ԱԱՃ** Ազգային անվտանգության ծառայություն

**ՔԿՀ** Քրեակատարողական հիմնարկ



## **Բովանդակություն**

<b>Նպատակը</b>	4
<b>Խնդիրներ</b>	4
<b>Ուսումնասիրման օբյեկտներ</b>	4
<b>Մեթոդներ</b>	4
<b>Ներածություն</b>	5
<b>Ձեկույց</b>	7
<b>Եզրակացություն</b>	40
<b>Առաջարկություններ</b>	41
<b>Հավելված 1</b>	42



## **ԼԳՏԲԻ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ատելության խոսքի դրսևորումներն ու նրանց իրավունքների ոտնահարումը ՀՀ առցանց տիրույթում**

### **Նպատակը**

Ուսումնասիրել ՀՀ առցանց տիրույթում ԼԳՏԲԻ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ատելության դրսևորումները և նրանց իրավունքների ոտնահարումը:

/2015թ. –ի մայիսի 1 –ից նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատված/

ՀՀ առցանց տիրույթ – սոց.ցանցեր և ՉԼՄ-ների առցանց տիրույթ /Էլեկտրոնային մամուլ՝ կայքեր, հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների, տպագիր մամուլի կայքեր/:

### **Խնդիրներ**

Ուսումնասիրման ենթակա գրառումների և հրապարակումների ամբողջական բազայի ստեղծում

Հավաքագրված նյութի որակական կոնտենտ վերլուծություն

Սոցիալական ցանցեր-ՉԼՄ-ների առցանց տիրույթում տեղեկատվության շրջանառության ուսումնասիրում

### **Ուսումնասիրման օբյեկտներն են**

ՀՀ առցանց տիրույթը

Ուսումնասիրման առարկան՝ ԼԳՏԲԻ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ատելության դրսևորումները և նրանց իրավունքների ոտնահարումը:

### **Մեթոդներ.**

Որակական և քանակական կոնտենտ վերլուծություն

Գործիք՝ Որակական և քանակական կոնտենտ վերլուծության ուղեցույցը թույլ է տալու ստեղծել բազա հետագա որակական վերլուծության աշխատանքների կազմակերպման համար:

Ուսումնասիրման մեթոդաբանության մանրամասն նկարագիրը տե՛ս Հավելված 1-ում:



## Ներածություն

2015թ.-ի մայիսի 1-ից նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում կատրավել է հետազոտություն ՅՅ առցանց տիրույթում ԼԳՏԻ անձանց նկատմամբ վերաբերմունքի ու կրանց իրավունքների ոտնահարման դրսևորումների վերաբերյալ:

Ոսումնասիրվել է մոտ 10 հազար հրապարակում այդ թվում լրագրական նյութեր, տեսակետներ - գրառումներ սոց ցանցերում, նյութերի մասին առցանց տարածքում հայտնված կարծիքներ, զլմ-ների կողմից պարտադրված տեսանյութեր, ձայնագրություններ, որոնք կրկին քննարկվել են առցանց տարածքում:

ՅՅ տարածքում քաղաքացիական, քաղաքական և մշակութային հարթակներում իրականացած տարբեր իրադարձություններ զուգորդվել են ԼԳՏԻ համայնքի նկատմամբ ատելության և պաշտպանողական տաբեր գրառումներով ու բռնկուն քննարկումներով ինչպես սոց ցանցերում այդպես էլ կայքերում և ՉԼՄ-ներում:

ԼԳՏԻ համայնքի վերաբերյալ սկանդալային վերնագրերը շարունակում են մնալ հիթային, շատ առցանց լրատվամիջոցների համար, ցավոք սրտի հաճախ միայն ուշադրության կենտրոնում հայտնվելու կամ միտումնավոր՝ ատելություն բորբոքելու համար:

Այսինքն ԼԳՏԻ համայնքի վերաբերյալ հրապարակվող նյութերի 85-90 տոկոսում չեն բարձրաձայնվում հիմնախնդիրներ , չեն ներկայացվում կշիռ ունեցող փաստեր ու տեղեկություններ: Դրանցում ամփոփված են աղմկահարույց , հաճախ ոչ կոմպետենտ մարդկանց տեսակետներ կամ կարծիքներ /քաղաքական գործիչներ, դեսասաններ, հայտնի մադրիկ, ովքեր երբեմն չունենք հասարակ տեղեկացվածություն մարդու իրավունքների ոտնահարումների, ԼԳՏԻ համայնքի հիմնախնդիրների մասին, սակայն կարծիք են հայտնում/, մերկապարանոց ապատեղեկատվություն /տեղեկություն առանց փաստի, փաստեր կասկածելի աղբյուրներից և այլն/ և ժողովրդավար երկրի համար ամենատխուր փաստերից մեկը՝ ՉԼՄ-ների կողմից միտումնավոր խտրականության, ատելության խոսքի վառ դրսևորումներ:

Յետաբրբիր կերպով այս տարի առավել ակտիվացել է իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից տարածվող հաղորդագրությունների, տեսակետների ու տեսանյութերի տարածումը առցանց տարածքում, ինչը ոչ թե ՉԼՄ-ների բարյացկամության այլ կազմակերպությունների առավել արդյունավետ աշխատանքի մասին է փաստում:

ԼԳՏԻ անձանց իրավունքների ոտնահարման դեպքերի բարձրաձայնում առցանց տարածքում գրեթե բացառապես իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կամ դրանց կողմից իրականացված ՉԼՄ-նախագծերի միջոցով է տեղի ունենում-



հիմնականում LGBTnews.am Էլեկտրոնային լրատվական կայք, «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ, «Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք» ՀԿ, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ և այլն:

Նախորդ տարի իրականացրած հետազոտությունը թույլ է տալիս մի շարք համեմատություններ անել /Տես նախորդ տարվա հետազոտություն/, այդ թվում ամրագրել LGBTnews.am Էլեկտրոնային լրատվական կայքի հանգուցային դերը առցանց տարածքում ԼԳՏԲԻ համայնքի հիմնախնդիրների ներկայացման և ատելության խոսքի, խտրականության կամ ապտեղեկատվության դեպքում, որպես հակակշիռ փաստարկների և տեղեկատվության աղբյուր: Այս կայքի ամկայությունը թույլ է տալիս մի շարք քաղաքացիների, ովքեր դեմ են ատելության, խտրականության դրսևորումներին, իրվունքների ոտնահարումներին առցանց տարածքում ներկայացնել կայքում տեղ գտած տեղեկատվությունը, հղումները՝ դրանցով իսկ ամրագրելով իրենց հանդուրժողական տեսակետները:

Մինչդեռ նախորդ տարիներին վերոհիշյալ քաղաքացիները առցանց տարածքում սեփական կարծիքը ԼԳՏԲԻ համայնքի հիմնախնդիրների վերաբերյալ երկմտելով կամ կասկածի տակ դնելով էին հայտնում, երբեմն առանց փաստերի: Կայքը նպաստում է, որպեսզի ավելի հաճախ հանդիպեն ԼԳՏԲԻ համայնքի նկատմամբ հանդուրժողականություն սերմանող կյուրեր, հիմնախնդիրների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկություններ:

Կրկին համեմատություն անելով նախորդ տարվա հետազոտության հետ, պետք է ամրագրել, որ «ԼԳՏԲԻ համայնքը», որպես թեմա քննարկվում է առհասարակ հանրային գործընթացներին զուգահեռ, իբրև դրանց անքակտելի մաս: Մի կողմից դա փաստում է այն մասին, որ ԼԳՏԲԻ համայնքը հասարակության բաղկացուցիչ մաս է, ընդունվի դա թե՛ ոչ, մյուս կողմից դա նշանակում է, որ ատելության խոսք սերմանելու հարմար հարթակ են դառնում հանրային գործընթացները:

Մատնանշենք կոնկրետ օրինակներ. Եթե 2014 թ.-ի ԼԲԳՏ համայնքին առընչվող թեմաների, ինչպես նաև ատելության խոսքի արտահայտման գազաթնակետը եվրատեսիլն էր՝ Կոնչիտա Վյուրստի հաղթանակով, ապա 2015թ.-ի հունիսի վերջին տեղի ունեցած «Էլեկտրիկ Երևան» հանրային ընդվզումը հոսանքի թանկացման դեմ դարձավ հարմար առիթ, կրկին շրջանառության մեջ դնելու ԼԳՏԲԻ համայնքին առընչվող թեմաները՝ օրինակ սոց. ցանցերում հայտնվեցին նրանց դեմ և կողմ կարծիքներ, փորձեր արվեց շարժումը վարկաբեկել, ԼԳՏԲԻ անձանց մասնակցությունը դիտարկելով որպես «սև բիծ», իսկ երբ սոց ցանցերում հայտնվեցին նրանց մասնակցությունը պաշտպանող տեսակետներ, հայիոյանքների տարափ տեղաց դրանց հեղինակների հասցեին, ովքեր սոց ցանցերում գրում էին, որ նրանք նույնպես հասարակության բաղկացուցիչ մաս են:

**ԼԳՏԲԻ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ատելության խոսքի դրսևորումներն ու նրանց իրավունքների ոտնահարումը ՀՀ առցանց տիրույթում**

2015թ.-ի հունիս ամսից ԼԳՏԲԻ համայնքի հետ կապված անհանդուրժող դրսևորում ընդգծվեց նաև առցանց տարածքում, երբ հայտնի դարձավ, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությունը ֆինանսական աջակցություն է ստացել Հայաստանում Գերմանիայի դաշնության դեսպանատնից ԼԳՏ անձանց շահերը պաշտպանելու համար:



**Երևանում Գերմանիայի դեսպանությունը 2015թ. հունիսի 9-ին «Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության հետ կնքեց պայմանագիր ֆինանսական աջակցության վերաբերյալ:**

Աջակցությունը սահմանվել է «Հայաստանում լեսբուհիների, միասեռականների, բիսեքսուալների և տրանսսեքսուալների (ԼՄՏԲ) իրավունքների պաշտպանության ոլորտում իրավապաշտպանների ու սկսնակ առաջնորդների գիտելիքների ամրապնդում և խթանում» ծրագրի համար: 30.000,- եվրո արժողությամբ աջակցային այս ծրագիրը նպատակ է հետապնդում ամրապնդել Հայաստանում լեսբուհիների և միասեռականների իրավունքները՝ պայքարելով բնակչության շրջանում վերջիններիս նկատմամբ դրսևորվող խտրականության և արհամարհանքի դեմ: Ստորև ներկայացվող աշխատանքներն ուղղված են նախապաշարմունքների վերացմանը և սեռական փոքրամասնությունների՝ անձի ազատ զարգացման հիմնարար իրավունքի ամրապնդմանը:

Մարդու իրավունքները համապարփակ և անբեկանելի են: Մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականությունն, անշուշտ, իր մեջ ներառում է նաև ԼՄՏԲ անձանց իրավունքները: Սեռական կողմնորոշման կամ սեռական ինքնության նկատմամբ պետական կամ ոչ պետական մակարդակներում ցուցաբերվող հետապնդումը և խտրական վերաբերմունքը և կամ հոմոֆոբ ոտնձգությունները ոտնահարում են մարդու տարրական իրավունքները, ինչպես բացատրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային պակտում:

Քաղաքացիական հասարակության քաջալերումը, հատկապես՝ իրավապաշտպաններին առաջարկվող պաշտպանությունն ու աջակցությունը, գերմանական և եվրոպական իրավապաշտպան քաղաքականության կենտրոնական թեմաներից է: Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հանդես է գալիս սեռական կողմնորոշման հանդեպ խտրական բոլոր դրսևորումների դեմ և հետևողականորեն պայքարում ընդդեմ լեզբուհիների, միասեռականների, բիսեքսուալների, տրանսսեքսուալների և ինտերսեքսուալների հանդեպ խտրականության: Ուստի երկկողմ համագործակցության շրջանակում ԳԴՀ արտգործնախարարության կողմից, ինչպես կոնկրետ այս դեպքում, աջակցություն են ստանում են նաև LUPFS անձանց իրավունքների բարելավմանն ուղղված ծրագրերը<sup>1</sup>:

Դեսպանության այս հաղորդագրությունը և զուգահեռ անհանդուրժողականությունն ու ատելությունն քարոզող արձագանքները լայնորեն տարածվեցին ՀՀ առցանց տիրույթում / կայքերից նոր գրառումներով հայտնվելով սոց. ցանցերում, ապա նորից գնալով կայքեր հատկապես սուր անհանդուրժող դրսևորումներով ու ենթատեքստերով/:

Քանի որ ուսումնասիրվող ժամանակահատվածում քաղաքական և քաղաքացիական գործընթացներն առավել ակտիվ էին, այս փաստը՝ ֆինանսական աջակցությունը, նույնպես դիտարկվեց քաղաքական ենթատեքստով, որոշ քաղաքական գործիչներ դրան տեսան,

**ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ` «ԳԵՅԵՐԻՆ» ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՁԱԿՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՐԱ.»**



Խայտառակ այս որոշումն անընդունելի են համարում Հայաստանի դեմոկրատական կուսակցության

Նախագահ Արամ Սարգսյանն ու «համահայկական ծնողական կոմիտե» ՀԿ-ի ղեկավար Արման Բոշյանը<sup>2</sup>:

Ինչո՞ւ Գերմանիայի դեսպանատունը չի աջակցում ավանդական ընտանիքներին՝ հռետորական հարց է հնչեցնում Արամ Սարգսյանը: «Մենք հազիվ ազատեցինք ու մաքրեցինք

<sup>1</sup> <http://www.eriwan.diplo.de/Vertretung/eriwan/hy/03-Politik/Menschenrechtspolitik/2015-6-9-new-generation-vertrag.html>  
<sup>2</sup> [http://www.iravunk.com/index.php?option=com\\_content&view=article&id=27732:-l-r-r&catid=123:top](http://www.iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=27732:-l-r-r&catid=123:top)



Կոմայգին սեռական փոքրամասնություններից: Ի վերջո, ոչ ոք այդ փոքրամասնություններին չի խանգարում իրենց գործը կատարել, բայց նրանք անընդհատ ավելին են ուզում», - ասաց կուսակցության ղեկավարը:

Գերմանիայի դեսպանի որոշումը, ըստ դեմկուսի ղեկավարի լայնածավալ հարձակում է հայկական ընտանիքի, աղաթների ու արժեահամակարգի վրա: Արամ Սարգսյանը կոչ է անում դեսպանին այդ 30.000 եվրոն տրամադրել Գերմանիայի սեռական փոքրամասնություններին՝ «Էնտեղի գեյերին»:

Բացի դեսպանի այս որոշումից՝ բանախոսին մտահոգում է նաեւ առաջիկայում խորհրդարան բերվելիք երկու՝ յուզվենալ արդարադատության եւ խտրականության դեմ օրինագծերի մասին: «Սա հստակ ծրագիր է. ցանկանում են հայաթափել Հայաստանը», - վստահ է քաղաքական գործիչը:

Ասուլիսի մյուս բանախոս, համահայկական ծնողական կոմիտեի հիմնադիր անդամ Արման Բոշյանը ասաց, որ Գերմանիայի դեսպանատունն իրավունք ունի նման գործունեություն ծավալել Հայաստանում եւ միասեռականների համար գումաներ տրամադրել. «Հայաստանում ոչ միայն թույլատրվում է, այլ որևէ օրենք չկա, որ արգելի դեսպանատանը գումար տրամադրել միասեռականների համար, ավելին՝ նույն բանը կարող է անել Ադրբեջանը կամ Թուրքիան: Այսինքն՝ որևէ օրենք չկա, որը վերահսկի դրսից եկող գումարները, որոնք իրականում մեր ազգային անվտանգության դեմ են»:

Ըստ Բոշյանի՝ եթե Հայաստանն ընդունի օրենք, որը կվերահսկի դրսից եկող գումարները, մեր պետությունը խնդիրներ կունենա Արեւմուտքի հետ, որը Հայաստանին այլեւս ֆինանսապես չի աջակցի:

Նշենք, որ այս նյութի վերնագիրն արդեն հուշում է, նյութի՝ անհանդուրժողական լինելու մասին, իսկ նյութում, որ լրագրողը ֆինանսասական աջակցություն ցուցաբերելու փաստը որակում է որպես «խայտառակ որոշում», ինչը կրկին հուշում է ՉԼՍ-ների և լրագրողների անհանդուրժողականության մասին: Սակայն, հաշվի առնելով [www.iravunk.com](http://www.iravunk.com) կայքի ատելության ու անհանդուրժողականության բուռն դրսևորումները ոչ միայն ԼԳՏԲԻ համայնքի այլև տարբեր խոցելի խմբերի և նրանց շահերի պաշտպանությամբ զբաղվող անձանց նկատմամբ, պետք է ամրագրել, որ վերոհիշյալ կայքի համար սա բավական «զուսպ» դրսևորում է:

ԼԳՏԲԻ համայնքի հետ կապված քննարկումների շղթայական ալիք բռնկվեց, «Էլեկտրիկ երևան» նախաձեռնության՝ Էլեկտրաէներգիայի թանկացման հետ կապված բողոքի ակցիայի ընթացքում սոց. ցանցերում, որտեղից էլ գրառումները հայտնվեցին կայքերում՝ նոր ենթատեքստերով վերադառնալով սոց ցանցեր:



## Օրինակներից մեկը.



Ֆեյսբուքյան օգտատեր Արման Ղարիբյանն արձագանքելով շուր բիզնեսի ներկայացուցիչներից մեկի ֆեյսբուքյան գրառամանը, որը շատ արագ հեռացվեց համացանցից՝ աղմուկից խուսափելու համար գրել էր.

«Բաղրամյանում հաղթած երիտասարդների մեջ բազմաթիվ ԼԳՏՏ անձինք կային և բոլորս /նույնիսկ հանրապետականները/ հպարտանում ենք նաև նրանցով , որովհետև նրանք էլ են այս հասարակության հպարտությունը»:

Չետաքրքիր է, որ քաղաքցիապես ակտիվ մարդիկ, այդ թվում լրագրողներ , մեդիա ոլորտի ներկայացուցիչներ սոց ցանցերի իրենց անհատական էջերում ավելի

հաճախ են խոսում հոմոֆոբիայի դեմ, բարձրաձայնում ԼԳՏՏ համայնքի հիմնախնդիրներ , քան ՉԼՄ-ները , որպես քաղաքացիական հասարակություն ձևավորող կարևոր բաղկացուցիչ մաս:


Քաղաքացիական և քաղաքական գործընթացներին զուգահեռ համացանցում հայտնվեցին հոմոֆոբիայի դեմ գրառումներ:

Չետաքրքիր է, որ այս տարի, քաղաքացիական ընդվզումներին զուգահեռ, հոմոֆոբիայի դեմ գրառումներն ավելի համաձայն են դարձել և ավելի հաճախ են հայտնվում սոց ցանցերում ու շրջանառվում կայքերում:

Ֆեյսբուքյան օգտատեր Արսեն Օհանյանը, հոմոֆոբիայի դեմ գրառում անելով կոչ էր անում յուրաքանչյուրին LQSPԻ անձանց դեմ որևէ բան գրելուց, կարծիք հայտնելուց առաջ քարծրացնել սեփական իրազեկվածությունը:

«Ժամանակին ես հոմոֆոբ էի, ասում էի « պետք ա դրանց վառել, խեղդել, սատկացնել, հային չի սազում...» և այլն: Հա, հա, ժամանակին կացին եմ եղել: Հետո հավանեցի մի աղջկա, սկսեցի գրել իրան, տեսց մի որոշ ժամանակ շփվում էինք: Շատ լավ մարդ էր, ու շատ սիրուն: Հետո պարզվեց լեսբի ա: Ծանոթացրեց իրա ընկերուհու հետ, շատ համահունչ զույգ էին, մեկը մյուսին լրացնող: Կամաց-կամաց հասկացա, որ մարդու սեռական կողմնորոշումը մարդկային հատկանիշ չի, այսինքն լավ ու վատ մարդ

լինելու չափանիշ չի: Հետո արդեն իրանց հետ ընկերացանք, ու հիմա լավ ընկերներ ենք: Հետո ծանոթացա իրանց շրջապատի հետ, իրանց գեյ ընկերների հետ ծանոթացա, շատերի հետ շփվում եմ, ոմանց ինձ հարազատ մարդ եմ համարում: Հետաքրքրությունից դրդված սկսեցի ինտեռնետով ու նույնասեռական ընկերներից միջոցով տեղեկանալ էդ երևույթի մասին: Ահագին բան պարզեցի իմ համար: Օրինակ, որ բնության մեջ էդ երևույթը միշտ եղել ա ու կլինի, որ մարդկանց մեջ էլ ա դա միշտ եղել ու կլինի՝ ԱՆԿԱՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆԻՑ, որ մեզ՝ հայերիս, մոտ էլ ա եղել, մի տեղ կարդացի, որ Տիգրամ Մեծը բիսեքսուալ ա եղել (չգիտեմ ինչքանով ա ճիշտ), որ նույնասեռական կամ ծնվում են կամ դառնում (եթե սխալվում եմ, ուղղեք), որ դա մարդու ընտրությունը չի, որ իրանք ոչ շատանում են, ոչ քչանում, իրանց քանակը միշտ նույնն ա՝ փոքր տատանումներով: Ասածս ինչ ա. միջև մի բանի մասին կարծիք հայտնելը, միջև իրանց ատելը, միջև իրանց վառելու/խեղդելու/վտարելու կոչեր անելը, ՈՒՄՈՒՄԱՍԻՐԵՔ ԷԴ ԵՐԱՌԻՅԹԸ, ՏԵՂԵԿԱՑԿԵՔ, որտև տեղեկացված չլինել ու ատել էդ երևույթը, մեղմ ասած, ՀԻՄԱՐՈՒԹՅՈՒՆ Ա: Հ.Գ. բոլոր նրանք, ովքեր ասում են «բա որ մեր երեխեն էլ տեսց լինի», եթե մի քիչ տեղեկություն ունենաք էդ երևույթի մասին, նման բան չեք ասի Հ.Գ.Գ. Ես վերջերս պարզեցի, որ 7 տարվա ընկերս գեյ ա, բայց դա ոչինչ չփոխեց մեր հարաբերություններում:



Այս տեսակ գրառումները, որպես կանոն անարձագանք չեն մնում .

Հոմոֆոբիայի դեմ արտահայտված անձին անպատվելով գրառումներ անող մեկ այլ օգտատեր մի քանի դիտարկում է անում, որ արժե ուշադրության արժանացնել, քանի որ դրանք հանրության մեջ արմատացած սարսափելի երևույթների խրախուսման մասին են բարձրաձայնում .

...Ձեր ծնողների սխալ դաստիարակության պատճառով եք դուք գեյ դառնում ...

... Յուրաքանչյուր ծնող ինքնասպան կլինի, եթե իմանա, որ իր երեխան գեյ ա, ինչ ուզում եք, արեք իրար , բայց մի քարոզեք էդ ...

Ապա նկարագրում է, որ իր 14 տարեկան որդին նայել է տեսանյութ « որտեղ լացելով գեյ տղան պատմել է , թե ոնց են ծեծել իրեն ու իր պարտնյոռին» ու ասել է, թե սրանց ազգականները ամոթ պիտի անեն ...

Եվ հպարտությամբ գրում է. «Այո, իմ որդին էլ ապագա հայ տղամարդ է , որ պիտի տփեն ու խելքի բերեն գոմիկներին»...

... «Գոմիկները Հայաստանում տեղ չունեն »....

Տողերի հեղինակը չգիտի ինչ է նույնասեռականությունը, այստեղ առկա է թեմայի վերաբերյալ և՛ գիտելիքի, և այն ձեռք բերելու ցանկության իսպառ բացակայություն: Հոմոֆոբիայի դեմ գրառումը ընկալվում է որպես նույնասեռականության պրոպագանդ ա, այս մի քանի տողով ներկայացվում է, թե ինչպես են հայ մայրն ու հայրը անհանդուրժողականություն, ասելություն և բռնություն սերմանում իրենց իսկ երեխաների մեջ:

Իսկ «գոմիկները Հայաստանում տեղ չունեն » արտահայտությունը շատ պատկերավոր կերպով ներկայացնում է հայ հանրության մեծամասնության կարծիքը՝ անհանդուրժողականություն, որից ծնվում է ասելությունը, խտրականությունը, բռնությունը, որը մեր հասարակությանը հեռացնում է ժողովրդավար լինելու տեսլականից:

«Սահմանադրական խառնաշփոթ»

«Էլեկտրիկ Երևան» նախաձեռնությունից հետո առավել ակտիվորեն սկսվեց քննարկվել քաղաքական մի գործընթաց՝ Սահմանադրական բարեփոխումներ, որը ուսումնասիրման ժամանակաընթացքում, ԼԳՏԲԻ համայնքի վերաբերյալ թեման պահեց հանրության կողմից կարևորվող թեմաների հիթում, ցավոք նաև ասելության դրսևորումների առումով:

Գրանցվեցին անգամ այնպիսի դեպքեր երբ մարդիկ արժանանում էին և հոմոֆոբների, և ԼԳՏԲԻ համայնքի ասելությանը:

Առհասարակ քաղաքական գործիչների, կուսակցական առաջնորդների և պաշտոնյաների համար ԼԳՏԻ համայնքի պատկանելիությունը կամ նրանց հետ կապ ունենալը հատկապես խոցելի դարձավ 2015թ. այս ամիսներին՝ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ քննարկումներին զուգընթաց:

Քանի որ հանրության կողմից անհանդուրժողականությունը մեծ չափերի է հասնում այս թեման տարբեր մարդկանց և ուժերի կողմից կիրառվում է, որպես «սև փիառ»-ի գործիք:

Իրականում հիմնախնդիրներ չեն լուսաբանվում կամ ներկայացվում, հաճախ ՉԼՄ-ների և սոց ցանցերի միջոցով պարզապես աղմուկ է բարձրացվում, որևէ անձի կամ քաղաքական որոշման շուրջ:

Եվ հաճախ պարզապես խաղաթղթեր խառնելու համար բարձրացվում է նմանատիպ առցանց աղմուկ՝ սերմանելով անհանդուրժողականություն, ոտնահարելով մարդու մի շարք իրավունքներ, խեղելով մարդկային ճակատագրեր:

Ոմանք պնդում էին, թե Սահմանադրության նոր նախագիծը կարևոր դերակատարում է ունենալու ԼԳՏԻ համայնքի համար: Այս թեմայով տարբեր քննարկումներ և իրարամերժ կարծիքներ հրապարակվեցին նույնասեռականների ամուսնությունը մայր օրենքում ամրագրելու վերաբերյալ:

#### Օրինակներ.



#### **Վենետիկի հանձնաժողովը դեմ է Զայաստանում միասեռ ամուսնությունների համար սահմանադրական արգելքին**

<http://www.1in.am/1686315.html>

Վենետիկի հանձնաժողովին այս ձևակերպումը չի բավարարում: Զանձնաժողովի կազմած փաստաթղթում ասվում է, չնայած Վենետիկի

հանձնաժողովը ընդունում է Զայաստանյայց առաքելական եկեղեցու կարևորությունը մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում, սակայն վերապահում ունի «բացառիկ առաքելություն» ձևակերպման նկատմամբ, որը կարող է հանգեցնել ոչ ճիշտ մեկնաբանությունների: Պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրության նախագծի 16 և 17 հոդվածները ոչնչով չեն տարբերվում գործող Սահմանադրության ձևակերպումներից, և

«բացառիկ առաքելություն» ձևակերպումը առկա է նաև գործող Սահմանադրության մեջ, այն ոչնչով չի խոչընդոտել կրոնական մյուս համայնքների և եկեղեցիների գործունեության ազատությանը, և չնայած դրան՝ Վենետիկի հանձնաժողովը պնդում է, որ այդ ձևակերպումը հանվի նախագծից:

Վենետիկի հանձնաժողովը ցանկանում է, որ Սահմանադրության նախագիծը չսահմանափակի միասեռական ամուսնությունների օրինականացման հնարավորությունը: Հանձնաժողովի ներկայացրած փաստաթղթում ասվում է, որ Սահմանադրության նախագծի 34-րդ և 15-րդ հոդվածները չպետք է մեկնաբանվեն որպես միասեռական ամուսնությունները ճանաչելու իրավական խոչընդոտ: Սահմանադրության նախագծի 15-րդ հոդվածը վերնագրված է «Ընտանիքի պաշտպանությունը» և դրանում ասվում է, որ ընտանիքը՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և բազմացման հիմք, գտնվում է պետության հատուկ պաշտպանության և հովանավորության տակ: Սա նշանակում է, որ պետությունը ընտանիք է ճանաչում այն միությունը, որը կարող է ապահովել բնակչության բազմացմանը: Միասեռական ամուսնության դեպքում բազմացումը ուղղակի բացառվում է և այդ պատճառով այն չի կարող կոչվել ընտանիք: Իսկ հոդված 34-ը, որը վերնագրված է «Ամուսնության ազատությունը», ասում է, որ ամուսնության տարիքի հասած կինը և տղամարդն իրենց կամքի ազատ արտահայտմամբ միմյանց հետ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Սա ևս միասեռական ամուսնությունները օրինականացնելու սահմանադրական արգելք է, և Վենետիկի հանձնաժողովի համար այս ձևակերպումներն անընդունելի են:

**«Եթե միասեռականների ամուսնություններն օրինականացվեն և գեյերի պակահղություն կատարվի, ապա այդ գեյերը մեզ կուտեն».** Գուրգեն Եղիազարյանը<sup>3</sup>:

Սահմանադրության փոփոխություններն իշխանությունների վերարտադրությունից բացի ավելի մեծ չարիքներ են պարունակում: Այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նման տեսակետ հայտնեց ԱԱԾ նախկին պաշտոնյա Գուրգեն Եղիազարյանը:



<sup>3</sup> <http://news-book.am/?p=66048/mi+qani+angam+kardacel+em+sahmanadrutyana+nor+tarberaky+bayc+chem+haskacel+tevoov+e+pa+shpanutyana+naxarary+gurgena+exiazaryan&l=am>

Անդրադառնալով մայր օրենքում գենդերային հավասարությանը, նշեց, որ Եվրոպան փորձում է թունավոր միջոցներ այստեղ անցկացնել: «Եթե միասեռականների ամուսնություններն օրինականացվեն և գեյերի պակադրություն կատարվի, ապա այդ գեյերը մեզ կուտեն», - մտահոգություն հայտնեց Գուրգեն Եղիազարյանը: Ասուլիսի մյուս բանախոս ՀՀԿ-ական Լեռնիկ Ալեքսանյանը չհամաձայնեց Գուրգեն Եղիազարյանի հետ: ՀՀԿ-ական պատգամավորը կրկին շեշտեց, որ Սահմանադրության փոփոխությամբ իշխանության վերարտադրության հարցը չի լուծվում:

«Միասեռականների ամուսնության մասին էլ ասեմ, որ Սահմանադրության մեջ նման կետ չի լինելու», - եզրափակեց Լեռնիկ Ալեքսանյանը:



**Հովհաննես Գալաջայի ֆեսթիվի գրառում.**

... «Ոչ»-ով զարդարված պիդառաստական դրոշմ դրել է, որպես ետնանկար ...

Սոց. Ցանցերում շատերը պնդում են, որ նույնասեռականները կողմ են սահմանադրության նոր նախագծին, որովհետև կկարողանան ամուսնանալ, շատ նույնասեռականներ էլ պնդում են, որ իրենք, որպես ՀՀ քաղաքացիներ դեմ են նոր Սահմանադրությանը՝ որվիետև համաձայն չեն մի շարք դրույթների հետ:

Իրականում կրկին, այս թեման, ինչպես վերևում նշվել է արդեն, ի հայտ գալուց հետո շահարկվում է հաճախ այս կամ այն քաղաքական և ոչ քաղաքական ուժերի կողմից:

Այս թեմային անդրադարձել էր LGBTnews.am

Էլեկտրոնային լրատվական կայքը՝ հանգամանալից բացատրելով «հոմոֆոբիայի նոր ալիք»-ի պատճառներն ու մեղիայի դերը, հողվածն ստորև՝ հատվածաբար.

Ո՞րն է հոմոֆոբիայի նոր ալիքի ի հայտ գալու պատճառը  
 Facebook սոցիալական ցանցում մի քանի օր է՝ հոմոֆոբիայի նոր ալիք է բարձրացել: Ցանցում օգտատերերը բուռն բանավեճեր են ծավալում LQSPԻ անձանց նկատմամբ վերաբերմունքի, նրանց իրավունքների վերաբերյալ: Ինչպես նախկինում, այս անգամ նույնպես գրառումները գերծ չեն ատելության խոսքից, վիրավորանքներից, փոխադարձ մեղադրանքներից և կշտամբանքներից:

Մոտ մեկ շաբաթ առաջ, ինչպես արդեն հայտնել էինք, Եվրախորհրդին առընթեր Վենետիկի հանձնաժողովը հրապարակեց Չայաստանում սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ նախնական գնահատականը:

Չրապարակված փաստաթղթում, ի թիվս նախագծի տարբեր դրույթների վերաբերյալ դիտարկումներին, հանձնաժողովն անդրադարձել է նաև փաստաթղթի 34-րդ կետին՝ «Ամուսնանալու ազատությունը», համաձայն որի՝ «ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդն իրենց կամքի ազատ արտահայտությամբ միմյանց հետ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն», ինչպես նաև 15-րդ կետին:

Վենետիկի հանձնաժողովն իր գնահատականում նշել է, որ այդ հոդվածը չպետք է մեկնաբանվի իբրև «նույնասեռ միությունների իրավական ճանաչման արգելք»:

Իբրև այս դիրքորոշման հիմնավորում՝ Վենետիկի հանձնաժողովը հղում է կատարել ՄԻԵԴ նախադեպային վճռին:

Սահմանադրական փոփոխությունների նախագծի 34-րդ և 15-րդ կետերի ձևակերպումների վտանգների մասին մենք արդեն գրել ենք:

Վենետիկի հանձնաժողովի այս գնահատականն էլ բանավեճերի ու մեկնաբանությունների տեղիք տվեց:

### **Ի՞նչ դեր ունեցավ մամուլը**

Չայաստանյան մամուլում Վենետիկի հանձնաժողովի գնահատականին օգոստոսի 3-ին մի հրապարակմամբ առաջինն անդրադարձավ 1in.am էլեկտրոնային կայքը՝ «Վենետիկի հանձնաժողովը դեմ է միասեռ ամուսնությունների համար սահմանադրական արգելքին» վերգրությամբ Նյութով:

Նյութը, սակայն, միայն նույնասեռ միությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի գնահատականի մասին չէ: Այն ընդհանուր գծերով ներկայացնում է հանձնաժողովի հրապարակած փաստաթղթի էությունը, անդրադարձ կա նաև կրոնական կազմակերպությունների վերաբերյալ հանձնաժողովի գնահատականին, Նյութի վերջին չորս պարբերություններն ընդհանուր դատողություններ են Վենետիկի հանձնաժողովի գնահատականների և Չայաստանի իշխանությունների նախաձեռնած սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ, և միայն մեկ պարբերության մեջ անդրադարձ կա նույնասեռ միությունների մասին հանձնաժողովի դիտարկմանը, որտեղ ասվում է, որ «Վենետիկի հանձնաժողովի համար ձևակերպումներն անընդունելի են», այնինչ հանձնաժողովը, ցավոք, այդքան համարձակություն չի ունեցել՝ բաց տեքստով ասելու, որ ամկա ձևակերպումներն անընդունելի են. հանձնաժողովն ընդամենը նշել է, որ այդ ձևակերպումները նույնասեռ միությունների իրավական ճանաչման արգելք չպետք է դիտարկել: Այսպիսով, Նյութում Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը ներկայացված է խեղաթյուրված, իսկ իբրև վերնագիր է առանձնացված նույնասեռ միությունների վերաբերյալ հատվածը, թեև Նյութի կոնտենտի



գերակշիռ մասն այլ շեշտադրումներ ունի: Հատկանշական է, որ «նույնասեռ միություն»-ը ներկայացվել է «միասեռ ամուսնություն» ձևակերպմամբ, այդ թվում՝ վերնագրում, այնինչ նախ «միություն»-ն ու «ամուսնությունը» տարբեր իրավական ձևաչափեր են, իսկ «միասեռ» եզրը վաղուց դիտվում է իբրև ոչ կոռեկտ:

Նույն օրը «Ժողովուրդ» օրաթերթի էլեկտրոնային կայքը նույնպես անդրադարձել է թեմային: Խեղաթյուրելով հանձնաժողովի գնահատականը՝ կայքը նյութի սկզբում գրում է, որ «Վենետիկի հանձնաժողովի համար այս ձևակերպումներն անընդունելի են և, ըստ էության, հանձնաժողովը ցանկանում է հակառակ ձևակերպումն ավելացնել նախագծում, այսինքն՝ Սահմանադրությամբ ամրագրել միասեռական ամուսնությունները», այնինչ, ինչպես արդեն վերը նշվեց, Վենետիկի հանձնաժողովն ընդամենը նշել է, որ փոփոխությունների նախագծի ձևակերպումները չեն կարող դիտվել իբրև նույնասեռ միությունների իրավական ճանաչման արգելք:

Ապա նյութի անհայտ հեղինակը գրում է. «Սակայն, պետք է նշել, որ դա հայի համար խորթ երևույթ է: Ճիշտ է՝ եվրոպական մի շարք երկրներում միասեռական ամուսնություններն ընդունված են, սակայն դա չի նշանակում, որ Հայաստանում այն ևս կարող է ընդունվել: Այստեղ առաջ են գալիս մի շարք հարցեր՝ սկսած հայի տեսակից, հայկական մտածելակերպից, ապրելակերպից և այլն»:

Նյութի շարունակությունը թեմայի շուրջ «Հայագն» կուսակցության վարչության անդամ Արմեն Հովհաննիսյանի՝ կայքին տված մեկնաբանությունն է, որում նա քննադատում է Վենետիկի հանձնաժողովին: Նյութում հակառակ տեսակետ ներկայացված չէ: Կայքում առանձին նյութով հակառակ տեսակետ նույնպես ներկայացված չէ:

Արդեն հաջորդ օրն «Առավոտ» կայքը թեմային անդրադառնում է երկու նյութով:

Առաջին նյութում կայքը հրապարակել է Կոմիտաս վարդապետի մեկնաբանությունը, որն ամբողջությամբ «ոչ մի եզրագծան էզի հետ չի հարաբերվում, ոչ էլ արուն արուհի հետ, նույնիսկ պլյուսը պլուսին չի միանում եւ ոչ էլ մինուսը՝ մինուսին» ոճի շրջանակներում է:

Երկրորդ նյութում, հավանաբար ի հակակշիռ առաջինում տեղ գտած կարծիքի, կայքը հրապարակել է իրավապաշտպան Արթուր Սաքունցի մեկնաբանությունը: Սաքունցը նշում է, որ ինքը համամիտ է Վենետիկի հանձնաժողովի դիտողությունների հետ:

Հիմնականում այս երկու հրապարակումն է, որ Facebook սոցիալական ցանցի օգտատերերի շրջանում հոմոֆոբ ալիքի տարածման պատճառ դարձավ: Թիրախավորվեցին ոչ միայն ԼԳՏԲԻ անձինք, այլ նաև իրավապաշտպան Արթուր Սաքունցը:

«Առավոտ»-ը, սակայն, այս երկու հրապարակմամբ չի սահմանափակվում: Երեկ կայքը հրապարակում է ԱԱԾ պետի նախկին տեղակալ Գուրգեն Եղիազարյանի մեկնաբանությունը: Նյութը սկսվում է Վենետիկի հանձնաժողովի դիտողության խեղաթյուրմամբ: «Վենետիկի հանձնաժողովը Սահմանադրության նախագծի վերաբերյալ առաջարկել էր փոփոխություն

մտցնել 34-րդ եւ 15-րդ հոդվածներում՝ չսահմանափակելով միասեռականների ամուսնությունները: Ըստ հանձնաժողովի, Սահմանադրության նախագծի 34-րդ և 15-րդ հոդվածները կարող են ընկալվել՝ որպես միասեռական ամուսնությունները ճանաչելու իրավական արգելք,- ասված է Նյութի առաջին նախադասությունում, այնինչ Վենետիկի հանձնաժողովը, ինչպես արդեն վերը մի քանի անգամ նշվեց, դրույթներում ոչ թե փոփոխություն մտցնելու առաջարկ է արել, այլ նշել է, որ դրանք չպետք է մեկնաբանվեն իբրև նույնասեռ միությունների իրավական ճանաչման արգելք, ոչ թե նշել է, թե դրանք այդպիսին կարող են ընկալվել: Տվյալ դեպքում գործ ունենք լրագրողի անգրագիտությա՞ն, թե՞ միտումնավոր խեղաթյուրման հետ, կարելի է միայն ենթադրել: Նշենք նաև, որ Նյութում մի քանի անգամ հանդիպում են «համասեռամուլ», «համասեռամուլություն», «միասեռական» ոչ կոռեկտ ձևակերպումները՝ թե՛ որպես եղիագարյանի ուղիղ խոսքի մեջբերումներում, թե՛ լրագրողի տեքստի հատվածներում: Ավելորդ է նշել, որ եղիագարյանի մեկնաբանությունն ամբողջությամբ հոմոֆոբ բնույթի է:

Երեկ մի շարք կայքեր (news.am, aseko.se.am, armtimes.com և այլն) հրապարակեցին Ավետարանական եկեղեցիների առաջնորդների համատեղ հայտարարությունը: Վերջիններս սահմանադրական փոփոխությունների մասնագիտական հանձնաժողովին հորդորում են «տեղի չտալ միջազգային կառույցների կարծիքներին» և կոչ են անում էլ ավելի «վճռական» ձևակերպումներ գտնել, «ինչի արդյունքում ամուսնությունը բացառապես կմեկնաբանվի որպես կնոջ և տղամարդու միջև դաշինք»:

Թե ինչու են վերոնշյալ կայքերը, իսկ «Առավոտ»-ը՝ առանձնահատուկ հետևողականությամբ, վերը բերված դիտանկյունից անդրադարձել Վենետիկի հանձնաժողովի փաստաթղթին՝ խախտելով լրագրության տարրական կանոններն ու դրսևորելով կա՛մ անգրագիտություն, կա՛մ խեղաթյուրման միտում, ենթադրությունների առարկա է:

Այս պահի դրությամբ թեմայի առնչությամբ մենք մամուլում այլ հրապարակումների չենք հանդիպել:

Հոդվածում նշված բոլոր հրապարակումները բուռն քննարկվել են սոց ցանցերում՝ գաղափարական բախումներից արագ անցնելով անձնական վիրավորանքների հարթությունը, այս անցումը, գրեթե օրինաչափություն է, որը հանրության անհանդուրժողականության մասին վկայող ևս մեկ փաստ է:

Ուսաումնասիրման ժամանակահատվածում հրապարակված Նյութերի 60-70 %-ը պարունակում են բացասական վերաբերմունք, ատելության խոսքի դրսևորում և մարդու իրավունքների ոտնահարում՝ ուղղված LQSFԻ համայնքի ներկայացուցիչներին և նրանց շահերը պաշտպանող, կամ հանդուրժողականության դրսևորումներ ցուցաբերող անձանց ու կազմակերպություններին:



Հովհաննես Գալաշյան  
Ներառական կրթությունը  
ինքնին հանցագործ  
համակարգ է, քանզի ստիպում է  
մեծամասնությանը հարմարվել  
պրոբլեմ ունեցողներին: Եթե  
դառնաներին բերեն  
սովորական դասարան, ապա  
ստիպված ամբողջ դասարանին  
պիտի տան դառնաներին  
համապատասխանող ուսուցում  
ու վարի տան ընդհանուրի  
կրթական մակարդակը:  
Ներառական կրթությունը ես  
չեմ կարող դիտարկել այլ կերպ,  
քան աշակերտների  
համատարած դեբիլիզացիայի  
ծրագիր:

2 minutes ago · Like · Reply

Նման նյութերի տարածման և հեղնակելու  
գործում, ինչպես Նախորդ տարի այս տարի  
նույնպես ՉԼՄ-ների շարքում առաջին  
հորիզոնականը գրավում է  
[www.iravunk.com](http://www.iravunk.com)-ը:

Եթե Նախորդ տարի աստելությունը առավել  
մեծ չափով այս մեդիա օղակում բաժին էր  
ընկնում կրոնական  
փոքրամասնություններին ու ԼԳՏԲԻ  
անձանց, այս տարի վերոհիշյալ թերթի  
գլխավոր խմբագիր Հովհաննես Գալաշյանն  
իր ֆեյսբուքյան էջում արդեն վիրավորում է  
մեկ այլ խոցելի խմբի՝ հաշմանդամություն  
ունեցող անձանց՝ ներառական կրթությունը  
համարելով հանցագործ համակարգ:

Եթե անցաց տարի թերթի դեմ դատական գործեր էր հարուցվել մի շարք քաղաքացիների և  
ԼԳՏԲԻ անձանց շահեր պաշտպանող կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից,  
ապա այս տարի այդ բանակին արդեն միացան հաշմանդամություն ունեցող մարդկանց  
շահերը պաշտպանող  
կազմակերպությունները:

**Սակայն մարդու իրավունքների այս  
տեսակ ոտնահարումները՝  
Նմանատիպ կարծիքների հիման վրա  
հրապարակված նյութերը չեն  
խանգարում, որ վերոհիշյալ  
խմբագիրը երկրի Նախագահից  
պարգև ստանա իր մասնագիտական  
առաքելությունը լավագույն կերպով  
կատարելու համար :**

Այս փաստերն ի հարկե քննարկվել են  
համացանցում, բայց ոչ հատկապես  
ուսումնասիրման ժամանակահատվածում:



Թերևս վերոհիշյալ պահվածքի խրախուսման արդյունքում ՝ շատ հաճախ, ինչպես Նախորդ  
տարի, ԼԳՏԲԻ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի դրսևորում որպես,  
անձնական վիրավորանքներ են հասցվում մարդու իրավունքների, ԼԳՏԲԻ անձանց շահերի  
պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներին.

**Konstantin Ter-Nakalyan**  
55 mins · Yerevan · Edited

հետաքրքիր և, են փինք արմենիայի ու հոր սերունդի պուպսիկները ոնց կրացատրեն, թե ինչու Ավստրալիայում եւ առնչությամբ մասսայական արտագաղթի չի սկսել ու ինչու Ավստրալիան հետամնաց երկիր չի, չէ՛ որ պուպսիկների համաշխարհային լիզան այսպիսի ապստակ վազուց չէր ստացել:

ասրի Ավստրալիան, կարգին թասիքով պետություն ու հասարակություն ունեն:



Верховный суд Австралии аннулировал все однополые браки в стране  
«Р»Высокий суд Австралии принял решение об аннулировании однополых браков, а закон о легализации однополых браков признан противоречащим...

**Օրինակ.**

Ֆեյսբուքյան օգտատեր Կոնստանտին Տեր-Նակալյանը, որ blogmews.am –ի աշխատակից է, այսինքն մեղիա ոլորտի ներկայացուցիչ, իր ֆեյսբուքյան էջում կիսվելով Ավտրիալիայում դատարանի կողմից նույնասեռակների ամուսնությունները չեղյալ հայտարարելու մասին բավականին հին նյութով, վիրավորում է «Նոր Սերունդ» և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ների ներկայացուցիչներին՝ նրանց անվանելով «պուպսիկներ» ակնարկում է, թե նույնասեռականության նկատմամբ անհանդուրժողականությունը ոչ արտագաղթին է նպաստում, ոչ էլ տվյալ

պետության զարգացումն է կանխարգելում:

**ԼԳՏԲԻ ԱՆՃԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ. ՀՀԿ-ԱԿԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

LGBTnews-ը շարունակում է հարցազրույցների շարքը խորհրդարանի պատգամավորների հետ, և այս անգամ փորձել ենք պարզել ԼԳՏԲԻ անձանց և նրանց իրավունքների վերաբերյալ Ազգային ժողովի ՀՀԿ-ական պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ռուզաննա Մուրադյանի կարծիքը:



**- Տիկի՛ն Մուրադյան, ինչպե՛ս եք գնահատում ԼԳՏԲԻ անձանց իրավունքների վիճակը Հայաստանում:**

- Ես դա մարդու իրավունք չեմ ցանկանում դիտարկել:

**- Եթե ոչ մարդու, ապա ի՞նչ էակի իրավունք եք ցանկանում դիտարկել:**

- Ես ուզում եմ ասել, որ չի կարելի դեմ գնալ այն բանին, ինչ բնությունն է ստեղծում ու Աստված:

**- Այդ դեպքում ինչո՞ւ եք դուք տրամադրված ընդդեմ ԼԳՏԻ անձանց, նրանց բնությունն ու, ինչպես դուք եք ասում, Աստված չի ստեղծել:**

- Ես խոսում եմ հարաբերությունների, բնության շարունակականության մասին: Ես ունեմ իմ հստակ պատկերացումը, որ ամեն ինչ պետք է լինի բնական օրենքների շրջանակներում: Ես ոչ մեկի դեմ ոչինչ չունեմ, ամեն մարդ ինքն է ընտրում իր նախասիրությունները, բայց այդ սկզբունքի կողմնակից չեմ:

**- Այսինքն՝ դուք նույնասեռականությունը նախասիրություն եք համարում:**

- Ես չգիտեմ, նախասիրություն չեմ չեմ համարում, չգիտեմ էլ, թե ինչ գնահատական տամ:

**- Դուք՝ որպես պատգամավոր, ձեզ պարտավոր չե՞ք զգում պաշտպանել Հայաստանի քաղաքացիներ հանդիսացող ԼԳՏԻ անձանց իրավունքները:**

- Մեր ազգին մի քիչ հարիր չէ, էլի, այդ ամենը: Իսկ եթե ԼԳՏԻ անձանց չենք ընդունում, դեռ չի նշանակում, որ նրանց իրավունքները չենք պաշտպանում:

**- Ինչպե՞ս եք պաշտպանում, ձեր՝ պատգամավոր ընտրվելուց ի վեր դուք ի՞նչ եք արել ԼԳՏԻ անձանց իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:**

- Այդ քաղաքացիները տարբեր ոլորտներում են, և նրանց իրավունքները պաշտպանված են: Այս ի՞նչ թեմա եք, ախր, վերցրել, ո՞նց կարելի է, եկե՛ք չպրոպագանդենք: Երբ խոսում ենք այս ամենի մասին, դա արդեն պրոպագանդա է:

**- Քաղաքացիների խնդիրների մասին բարձարածայնելը դուք պրոպագա՞նդա եք համարում:**

- Ես իմ ասելիքն ասացի, վերջացրի: Ես այլ կարծիք չունեմ: Վե՛րջ: Այսքանը:

**Ուսաումնասիրման ժամանակահատվածում հրապարակված նյութերի**

Մոտավերապես 20-25 % -ը

Պարունակում են համեմատաբար չեզոք տեղեկատվություն: Դրանք հիմնականում արտասահմանյան ՉԼՄ-ներից թարգմանված նյութերն են, հիմնականում ռուսական լրատվամիջոցներից.



## Կոլումբիայում նույնասեռականները կկարողանան երեխա որդեգրել<sup>4</sup>

Կոլումբիայի Սահմանադրական դատարանը հանել է նույնասեռական զույգերի՝ երեխա որդեգրելու սահմանափակումը:

Մինչ այս նույնասեռական զույգերը կարող էին երեխա որդեգրել միայն այն դեպքում, երբ երեխան զույգերից մեկնումեկին էր:

Դատարանը որոշել է, որ այս արգելքը սահմանափակում էր երեխաների՝ ընտանիք ունենալու իրավունքը:

Այս տեսակ նյութերը հաճախ պարզապես ընդհանուր տեղեկատվություն են պարունակում ԼԳՏԲԻ համայնքին առընչվող որևէ հարցի կամ որոշման վերաբերյալ, սակայն վեր չեն հանում հիմնախնդիրներ, սովորաբար չեն ունենում կոնկրետ հերոսներ, և քիչ են նպաստում ԼԳՏԲԻ համայնքի և նրանց հիմնախնդիրների իրազեկման բարձրացմանը: Առաջին հայացքից բավական չեզոք այս նյութերը, որոնցում չկա ատելության կոչ, լրագրողի տեսակետ և այլն, հաճախ ընտրվում են հայ հանրության համար կարևոր երևույթների վերաբերյալ ենթատեքստերով՝ կոնկրետ այս օրինակի դեպքում ընտանիքն է և երեխան: Ենթատեքստի միջոցով ցույց է տրվում , որ «սա է արտասահմանից ներմուծվող ընտանիք» բանաձևը, որը խիստ տարբերվում է՝ հայկական՝ կնոջ և տղամադրու միություն հանդիսացող ընտանիքից: Տվյալ դեպքում այս նյութը գալիս է ամրագրելու առաջին բաժնում տեղ գտած օրինակների անհանդուրժողականության դրսևորումները՝ միայն թե ենթատեքստի միջոցով, առանց մերկապարանոց կոչերի ու ատելության դրսևորումների:

### **Առցանց տիրույթում ԼԳՏԲԻ համայնքի նկատմամբ ատելության խոսքի չափաբաժինները՝ տոկոսային հարաբերակցությամբ և օրինակներով:**

### **Ուսումնասիրման ժամանակահատվածում հրապարակված և առցանց տարածքում հայտնված նյութերի 10-15 %-ը Հայաստանյան ԼԳՏԲԻ համայնքի հիմնախնդիրների մասին , իրական հերոսներով և իրական փաստերով հրապարակումներն են:**

Դրանց 10 %-ը հասարակական կազմակերպությունների կողմից տարածվող հաղորդագրություններն են, որոնք, ցավոք հաճախ սոց ցանցերում և որոշ ՉԼՄ-ների կողմից բացասական արձագանք գտնելով ծնում են, նոր՝ անհանդուրժողականություն, ատելություն, խտրականություն սերմանող և ապատեղակատվություն տարածող նյութեր:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հասարակության անհանդուրժողականությունը ներկայացնելու, ԼԳՏԲԻ հիմնախնդիրները բարձրաձայնելու մասնագիտական ակտիվությամբ աչքի են ընկել լրագրող Արման Դարիբյանի նյութերը և նրա հրապարակումներից մեկն էլ կներկայացնենք, որպես հիմնախնդիր, իրական հերոս և փաստեր ներկայացնող նյութ:

<sup>4</sup> <http://araratnews.am/kolumbiayum-nuynaserakannereh-kkaroghanan-erexa-ordegrel>

Medialab.am-ից նյութը հայտնվել է blogmews.am-ում, ինչպես նաև այլ բլոգ բաժին ունեցող կայքերում ապա նաև սոց.ցանցերում:

**Սեռական շահագործում եւ «կեղտոտ աշխատանք».** **Նույնասեռական դատապարտյալները «դժոխքում» են ապրում**



«Չունի հայաթում 12 տեղանոց զուգարան կա, ըտեղ ամեն օր սեքս էին անում, նույնասեռականներին զոռով մտցնում էին զուգարան ու ...», - 31-ամյա Գոռը անցած տարի է դուրս եկել կալանավայրից, հիշողությունները դեռ թարմ են:

Գոռը (անունը փոխված է) նույնասեռական է: Կալանավայրում բոլորը տեղյակ են եղել երիտասարդի սեռական կողմնորոշման մասին:

«Մարդկանց թվում ա, եթե դու նույնասեռական ես, ուրեմն ինչ տղա գա, պիտի հետը սեքս անես, բայց ես ընդամենը մի հոգու հետ եմ կապված եղել, 9 ամիս ա տեւել մեր կապը, ուրիշի հետ սեքս չեմ արել, չնայած շատ են ստիպել...», - պատմում է Գոռը:

Տղան մեծացել է Երեւանի մանկատներից մեկում, հետագայում որդեգրվել է Ճիրակի մարզում ապրող ընտանիքի կողմից: Չափահաս դառնալուց հետո Գոռը մեկնել է Թուրքիա, որտեղ աշխատել է որպես մատուցող:

2007 թ. Հայաստան վերադառնալուց հետո նա դատապարտվել է 7 տարի ազատազրկման՝ սպանություն եւ գողություն անելու մեղադրանքով: Գոռի խոսքով՝ ինքը հանցագործ չէ, իր «գլխին սարքել են», քանի որ տեղյակ են եղել սեռական կողմնորոշման մասին:

«Իմ կյանքը չստացվեց...ես չգիտեմ, իմ իսկական ծնողներն ովքեր են, անձնական կյանքս սենց դասավորվեց, հետո անիմաստ տեղը 7 տարի նստեցի...մեկ-մեկ որ հիշում եմ, քիչ ա մնում թոկը գցեմ վզիս ու կախվեմ...», - ասում է Գոռը:

Երիտասարդը 7 տարիների ընթացքում հասցրել է լինել մի քանի կալանավայրերում՝ Արթիկ, Սեւան, Կոշ, Նուբարաշեն: Գոռի խոսքով՝ նույնասեռականների նկատմամբ վերաբերմունքը բոլոր կալանավայրերում գրեթե նույնն է. եթե նույնասեռական ես, պիտի պատրաստ լինես ամենադաժան վերաբերմունքի եւ ստորացումների:

«Ինձ ուզել են ստիպեն, որ զուգարան մաքրեմ, բայց ես չեմ մաքրել, դրա համար ինձ ծեծել են, հետո զանգել եմ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Էնտեղից եկել են, դրանից հետո ինձ էլ բան ասող չկար», - պատմում է Գոռը:

Կալանավայրերում նույնասեռականներին առանձին խուց են հատկացնում՝ նրանց իսկ անվտանգության համար, թեեւ դա էլ դատապարտյալներին չի երաշխավորում սեռական բռնությունից եւ շահագործումից.

«Չունի «լավ տղերքը» կալանավայրի աշխատողին 1000-2000 դրամ են տալիս, որ նույնասեռականներից մեկին բերեն իրենց խուց, եթե չի էլ ուզում, զոռով են տանում, եղ տղուն ոնց ասես օգտագործում են, հետո նույն աշխատողը հետ ա տանում իրենց խուց: Աշխատողներն են դաբրո տալիս կալանավորներին, ասում են՝ ոնց ուզում եք, ըտենց էլ շարժվեք», - պատմում է Գոռը:

Նրա խոսքերը հաստատում են «Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կամակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը եւ ՀԿ-ի բազմազանության խթանման բաժնի համակարգող Արման Սահակյանը, ովքեր 2013 թվականից հանդիսանում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում եւ մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի անդամ:

«Միայն նույնասեռական լինելը բավական է, որ այդ մարդկանց կալանավայրում ազատ հայիոյեն, նրանց ծնողներին հայիոյեն եւ մնան անպատիժ», - «Մեդիալաբին» ասում է Սերգեյ Գաբրիելյանը:

Սերգեյ Գաբրիելյանի խոսքով՝ նույնասեռականներին ստիպում են զբաղվել կալանավայրում ամենաանպատվաբեր աշխատանքով՝ զուգարանների մաքրմամբ: Ընդ որում, դատապարտված նույնասեռականը ստիպված է լինում մաքրել ոչ միայն իր խցի զուգարանը, այլեւ մյուս խցերինը եւս:

«Նույնասեռականներն իրավունք չունեն օգտվել ընդհանուր ճաշարանից, նրանց սպասքն առանձնացված է հատուկ նշաններով: Կա քրեակատարողական հիմնարկ, որտեղ հակառակն է տեղի ունեցել, քանի որ նույնասեռական անձն արդեն օգտվել է ճաշարանից, մյուսները չեն գնում այդտեղ հաց ուտելու», - նշում է Գաբրիելյանը:

Արման Սահակյանն էլ նշում է, որ նույնասեռականների նկատմամբ խտրական վերաբերմունքն ակնհայտ է ոչ միայն քրեակատարողական հիմնարկների (ՔԿՀ) աշխատակիցների կողմից գործածվող հայիոյախառն պիտակներից, այլեւ նրանց կենցաղային պայմաններից:

«Նույնասեռականներին հատկացված խցերը տարբերվում են այլ խցերից, գույքը մաշված է, տաքացուցիչ չկա, սպիտակեղենները կեղտոտ են», - «Մեդիալաբին» ասում է Սահակյանը:

Դիտորդները նշում են, որ կալանավայրում գտնվող նույնասեռականները հիմնականում խուսափում են բարձրաձայնել իրենց հետ տեղի ունեցած բռնությունների մասին, սակայն այլ նույնասեռական դատապարտյալների վերաբերյալ պատմում են զարհուրելի դեպքեր:

«Երբ մենք նույնասեռական դատապարտյալին կոչ ենք անում, որ նա բողոք ներկայացնի՝ այդպիսով փորձելով պաշտպանել իր իրավունքները, նա ասում է՝ ես չեմ ուզում, ինձ ոչինչ պետք չէ, մենակ թե դուրս գամ ես դժոխքից, նրանք օրացույց ունեն եւ օրերն են ջնջում՝ անհամբերությամբ սպասելով իրենց ազատության օրվան», - ասում է Սերգեյ Գաբրիելյանը:

Նախկին դատապարտյալ Գոռը «Մեդիալաբին» ասում է, որ ինքը եւս չի ցանկացել բողոք ներկայացնել իր նկատմամբ բռնությունների մասին:

«Ինձ 4-5 հոգով ծեծել են, որովհետեւ ես չեմ համաձայնել սեքս անել մեկի հետ, ում չէի ուզում: Իմ տեսքից պարզ երեւում էր, որ ես ծեծված եմ, բայց ես չեմ բողոքել, ոչ էլ ինձ աշխատակիցներն են հարցրել, թե ինչ է եղել հետո», - պատմում է նա:

Դիտորդական խմբի փորձագետ իրավապաշտպան Արթուր Սաքունցը նշում է, որ կալանավայրերում նույնասեռականների նկատմամբ վերաբերմունքը չի տարբերվում հասարակությունում տիրող ընդհանուր տրամադրվածությունից:

Արժեքների համաշխարհային հետազոտության համաձայն (World Value Survey Database 2010-2014), Հայաստանում ամենաբարձր անհանդուրժողականության մակարդակը նույնասեռականների հանդեպ է՝ 92.7%, երկրորդ խմբում ՁԻԱՀ ունեցողներն են՝ 76.9%, երրորդում՝ այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ 56.6%:



«Կալանավայրերում տիրում է նույն մոդելը, որը գործում է մեր հասարակությունում, պարզապես փակ հաստատություններում դա առավել խտացված է եւ ակներե», - «Մեդիալաբի» ասում է Սաքունցը:

Իրավապաշտպանը եղել է Նորվեգիայի, Լեհաստանի, Գերմանիայի, Էստոնիայի, Նիդեռլանդների եւ Միացյալ Նահանգների քրեակատարողական հիմնարկներում եւ այնտեղ նույնասեռականների նկատմամբ խտրական վերաբերմունք չի նկատել:

«Այդ հասարակություններում նույնասեռական անձինք հիմնականում խնդիրներ չունեն, այդ պատճառով էլ իրենց կալանավայրերում եւս չկա նման խնդիր», - նշում է նա:

Արթուր Սաքունցն ականատես է եղել, թե Հայաստանի ՔԿՅ-ներից մեկում պահվող դատապարտյալի նկատմամբ ինչպիսի խտրական վերաբերմունք են ցուցաբերել:

«Կալանավորը մեխ էր կոլ տվել, սակայն նրան չէին ցանկանում տեղափոխել դատապարտյալների հիվանդանոց, քանի որ հիվանդանոցում առանձին տեղ չկար, որպեսզի նրան հատկացնեին: Հետո առանձին տեղ էին պատրաստել, նոր նրան տեղափոխել են: Այսինքն՝ բուժհաստատությունում եւս այս մարդիկ առանձնացվում են մյուսներից», - ասում է Արթուր Սաքունցը:

Քրեակատարողական հաստատություններում՝ նույնասեռականների հանդեպ վերաբերմունքի մասին սակայն խոսալու եւ պարզաբանումներ տալու ցանկություն չունեն պատկան մարմինները: Հունիսի սկզբից «Մեդիալաբն» առնվազն երկու անգամ գրավոր դիմում է ներկայացրել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետ, գեներալ-մայոր Արթուր Օսիկյանին՝ խնդրելով թույլ տալ թեմայի շուրջ հարցազրույց անցկացնել վարչության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի ներկայացուցչի հետ:

Վարչության պետի տեղակալ Արմեն Համբարձումյանը մեր դիմումին ի պատասխան հայտնել է, որ «ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնին աշխատում է գերբեռնված օրակարգով, աշխատակիցները բաժնի պետի գլխավորությամբ ուսումնասիրություններ են իրականացնում քրեակատարողական հիմնարկներում, ուստի այս պահին հարցազրույցը հնարավոր չէ իրականացնել»:

Իսկ բաժնի աշխատակից Մարինե Գասպարյանը մեզ հետ հեռախոսազրույցում նշեց, որ ամբողջ բաժնին այս պահին գործուղման մեջ է, որն ավարտվելու է հուլիսի վերջին: Սակայն, հուլիսին վերջին եւս «Մեդիալաբի» դիմումները մնացել են անպատասխան:

«Որքանով ՀՀ կառավարության վերաբերմունքն է փոխվել Հայաստանում նույնասեռական անձանձ նկատմամբ, այդքանով էլ բարելավվել է քրեակատարողական հիմնարկներում նույնասեռական անձանց վիճակը», - ասում է «Նոր Մերուկ» ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը: - Քանի դեռ իշխող կուսակցության մոտ կա բացասական վերաբերմունք նույնասեռական անձանց նկատմամբ, իրավիճակը չի փոխվի: Պետք է լինի հստակ հրահանգ, որ նույնասեռականները ունեն նույն իրավունքները, ինչ բոլորը»:

Դիտորդական խումբը նախորդ տարվա տարեկան հաշվետվության մեջ անդրադարձել է կալանավայրերում նույնասեռական անձանց իրավունքների պաշտպանության խնդրին. մեկ տարի անց, սակայն, իրավապաշտպանները այս ուղղությամբ որեւէ բարեփոխում չեն արձանագրել:

Առաջիկայում նախատեսվում է հրապարակել տարեկան հաշվետվությունը, որում ըստ փորձագետների, առավել ընդգրկուն անդրադարձ կլինի նույնասեռական դատապարտյալների իրավունքներին:

Սերգեյ Գաբրիելյանը վստահ է, որ իրավիճակը կարելի է փոխել երկու պայմանի միաժամանակյա առկայությամբ. իրազեկել մարդկանց, բարձրացնել նրանց իրավագիտակցությունը եւ ընդունել քաղաքական որոշում՝ նույնասեռականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Իրավապաշտպանը հիշեցնում է, որ «Հայաստանը վավերացրել է նույնասեռականների իրավունքներին վերաբերող գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերը»:

Արթուր Սաքունցը եւս վստահ է, որ քրեակատարողական հիմնարկների պետերը ցանկության դեպքում կարող են բարելավել նույնասեռական դատապարտյալների կյանքի պայմաններն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը: Սաքունցն էլ իր հերթին հիշեցնում է, որ ՔԿԶ-ների պետերին նշանակում է անձամբ ՀՀ նախագահը:

Իրավապաշտպանները օրինակ են բերում ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը.

«Ժամանակին բոլորը շատ վատ էին վերաբերում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, սակայն իշխանությունը հստակ դիրքորոշում ցուցաբերեց եւ հասարակության մեծամասնության վերաբերմունքը փոխվեց: Այդ փոփոխությունն ակնհայտ է նաեւ ՄԻԱՎ-ով ապրող դատապարտյալների նկատմամբ: Նույնպիսի փոփոխություն կարող է լինել նույնասեռականների նկատմամբ, եթե իշխանությունները կամք դրսեւորեն», - նշում է Սերգեյ Գաբրիելյանը:

Շուրջ 10 ամիս քաղաքացիական կյանք վերադարձած Գոռը ունի աշխատանք եւ աշխատավայրում եւս չի թաքցնում իր սեռական կողմնորոշումը. «Ես ասել եմ, որ ես այսպիսին եմ, ուզում եք՝ ինձ ընդունեք, չեք ուզում՝ դա ձեր խնդիրն է»:

Գոռը նշում է, որ ի տարբերություն կալանավայրում անցկացրած տարիների, այժմ ոչ ոք չի փորձում իր հետ ստիպողաբար սեռական հարաբերություն ունենալ.

«Մարդիկ կարող է չընդունեն ինձ, բայց ոչ մեկ օրը ցերեկով չի գա ու փորձի ինձ բռնաբարել... - ասում է նա, - մեկ-մեկ հավատս չի գալիս, որ դուրս եմ եկել այդ դժոխքից»:

### **Արման Ղարիբյան**

#### **Լուսանկարում՝ Գոռը**

<http://medialab.am/news/id/6632>

Նյութը տեղադրել ենք, ամբողջությամբ, որպեսզի հստակ երևա, որ լրագրողը բազմակողմանի փաստեր ներկայացնելու համար փորձել է կապ հաստատել պատկան կառույցների հետ, ներկայացրել է մի քանի իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների տեսակետներ, չի կենտրոնացել միայն հերոսի ճակատագրի վրա այլ նրա միջոցով ներկայացրել է ԼԳՏԲԻ համայնքի մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում պետական կառույցների և հանրության վերաբերմունքը նույնասեռականների նկատմամբ:

Վերնագրում , լուսանկարում և նյութում բացակայում է ատելության և խտրականության դրսևորումը, չկան խտրականության ենթատեքստեր և ակնարկներ, կոչեր, պահպանված է էթիկայի կանոնները և ի վերջո ներկայացվում է ՀՀ քաղաքացու, առհասարակ մարդու ճակատագիր:





## Նախադեպային իրադարձություններ

### Երևանում ԵՄ դեսպանատան դիմաց այրեցին բազմազանության դրոշմ<sup>5</sup>

«Չանուն օրենքի» հասարակական-քաղաքական կազմակերպությունն այսօր՝ Նոյեմբերի 6-ին, Չայաստանում Եվրոպական միության պատվիրակության շենքի առջև այրեց ԼԳՏԻ դրոշմ՝ ԵՄ-ին և Չայաստանում գործող միջազգային կազմակերպություններին հորդորելով չքարոզել միասեռականություն:

«Չանուն օրենքի» հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ Ծովինար Կոստանյանը նշեց, որ Չայաստանում տարբեր տեսակի «կասկածելի փոքրամասնությունների» իրավունքները պաշտպանելը և այն հավասարեցնելը ազգային արժեքներին նշանակում է խարխուլել պետության հիմքերը, հայտնում է news.am-ը:

«Մենք, լինելով հայ, մի ազգի ներկայացուցիչ, որն առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, հարկ ենք համարում պաշտպան կանգնել քրիստոնեության հիմնարար արժեքներին: Մենք չենք ցանկանում խախտել որևիցե մեկի իրավունքները, սակայն նաև թույլ չենք տա ոտնահարել մեր իրավունքը», -ասաց Ծովինար Կոստանյանը:

ԵՄ շենքի դիմաց ԼԳՏԻ դրոշմ այրելուց հետո ակցիայի կազմակերպիչներին մոտեցան գրասենյակի ներկայացուցիչները, որոնք խիստ զարմացած էին, թե ինչ է կատարվում գրասենյակի առաջ: «Չանուն օրենքի» կազմակերպությունը պահանջագիր հանձնեց նրանց՝ հորդորելով նրանց գերծ մնալ Չայաստանում միասեռականության քարոզումից:

### Արման Սահակյան, Ֆեյսբուքյան գրառում.

«Այրել հասարակության լիիրավ անդամներ հանդիսացող խմբի խորհրդանիշ հանդիսացող դրոշմ՝ նշանակում է լուրջ և վտանգավոր մարտահրավեր նետել ՀՀ Սահամանդրությամբ, օրենքներով և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրացմանը, ինչը ժողովրդավարության սկզբունքների կասկածի լուրջ հիմքեր է ստեղծում»:

Այս երևույթի վերաբերյալ [www.asparez.am](http://www.asparez.am) -ը ներկայացրեց հանրությանը հարցազրույց **«Նոր Սերունդ» մարդասիրական 34** նախագահ, իշավապաշտպան Սերգեյ Գաբրիելյանի հետ<sup>6</sup>:

### «Չայաստանում կան ուժեր, որոնք նպաստում են խտրականության տարածմանը հատկապես երիտասարդների և պատանիների շրջանում»

Նոյեմբերի 6-ին երևանում՝ Եվրամիության շենքի դիմաց, տեղի էր ունեցել ցույց՝ ի պաշտպանություն մեծամասնության իրավունքների: Այս առիթով զրուցեցինք «Նոր Սերունդ» 34 նախագահ, իշավապաշտպան Սերգեյ Գաբրիելյանի հետ:

<sup>5</sup> <http://www.verelq.am/hy/node/4451>

<sup>6</sup> [http://www.asparez.am/news-hy/sergey\\_gabrielyan-hy-2/](http://www.asparez.am/news-hy/sergey_gabrielyan-hy-2/)

**- Ինչպե՞ս կմեկնաբանեք Եվրամիության շենքի դիմաց տեղի ունեցած ցույցը՝ հանուն մեծամասնության իրավունքների:**

- Նախ ասեմ, որ ցույցը ուղղված էր ԱՄՆ դեսպանի հայտարարության դեմ եւ շատ հետաքրքիր էր, որ այն տեղի էր ունենում Եվրամիության շենքի մոտ, անհասկանալի իրավիճակ էր: Պարզ չէ, թե ինչ կապ ունի Եվրամիությունը ԱՄՆ դեսպանատան կողմից արված հայտարարության հետ: Երկրորդ հերթին՝ ի՞նչ ասել է մեծամասնություն կամ փոքրամասնություն, ովքե՞ր են դրել այդ մեծամասնության կամ փոքրամասնության չափերը եւ որտե՞ղ են այդ չափանիշներն ամրագրված: Արդյո՞ք ունենք մենք Սահմանադրության մեջ փոքրամասնություն կամ մեծամասնություն հասկացությունները: Այդ ցույցը ուղղված է եղել ԼԳՏԲԻ անձանց դեմ, եւ ցուցարարների ասելով՝ իրենք մեծամասնություն են, ԼԳՏԲԻ-ները փոքրամասնություն են, սակայն որտե՞ղ են այդ չափորոշիչները գրված. ո՞վ է մեծամասնություն, ո՞վ է փոքրամասնություն: Միանշանակ դա ակցիա էր, որը ցույց է տալիս, որ Հայաստանում կան շարժումներ, կան ուժեր, որոնք նպաստում են խտրականության տարածմանը հատկապես երիտասարդների եւ պատանիների շրջանում, ամրապնդում են մարդկանց մոտ ատելությունը եւ այդ ատելությամբ լցված պայքարը: Ես չեմ էլ հասկանում, թե ինչի դեմ են իրենք պայքարում, ովքեր են այդ պայքարողները: Ես մի քանի լուսանկար նայեցի այնտեղ. ներկա էին նաեւ պատանիներ, անչափահասներ՝ ըստ իս. արդյո՞ք նրանց մասնակցությունն այդ ցույցին թույլատրելի է, օրինական է, թե՞ ոչ եւ, առհասարակ, արդյո՞ք այդ ցույցի մասին քաղաքապետարանի համապատասխան մարմիններին ներկայացվել է եւ նման բան կազմակերպելը ինչքանո՞վ է օրինական: Համաձայն մի շարք վավերացված փաստաթղթերի՝ ՀՀ-ն պարտավորություն է կրում պայքարելու նման ատելություն եւ խտրականություն սերմանող երեւույթների դեմ: Նման ակցիա կազմակերպելը դեմ է թե մարդկային, թե իրավական դրույթներին: Այսքան ժամանակ երբեւէ թե կրոնական, թե ազգային փոքրամասնությունների, թե ԼԳՏԲԻ անձանց կողմից ակցիաներ չի կազմակերպվել հանուն իրենց իրավունքների պաշտպանության նման ճանապարհով, այսինքն՝ երբեք չի այրվել որեւէ դրոշ հանուն իրենց իրավունքների պաշտպանությանը կամ որեւէ գերատեսչության ղեկավարի նկարներ չի այրվել՝ հանուն իրենց իրավունքի պաշտպանության, թեպետ ՀՀ-ում, շատ լավ գիտենք, որ շատ է ատելությունը այդ մարդկանց հանդեպ, բայց երբեւէ նման ատելությամբ այդ մարդիկ նման քայլեր չեն արել: Այդուհանդերձ, հակառակը տեսանք, թե ինչ կատարվեց Եվրամիության պատվիրակության շենքի դիմաց:

**- Նշեցիք ԱՄՆ դեսպանի խոսքի մասին. մի փոքր կմանրամասնե՞ք, թե ինչի մասին է խոսքը:**

- «Հանրային տեղեկատվություն եւ գիտելիքի կարիք» ՀԿ-ն վերջերս կազմակերպել էր ԼԳՏԲԻ ֆորում, որում մասնակցում էին ԼԳՏԲԻ անձինք եւ իրավապաշտպաններ, որտեղ, ըստ իմ ունեցած տեղեկության, ներկայացվել են հիմնախնդիրներ եւ հիմնախնդիրների լուծմանն ուղղված քայլեր, թե ինչ կարելի է անել, որպեսզի մարդու իրավունքներն ավելի գերակատար լինեն ՀՀ-ում, չոտնահարվեն մարդկանց իրավունքները: Դրանից հետո այդ տեղեկատվության շուրջ բավականաչափ ատելությամբ լցված քաղաքացիներ սոցցանցերում հնչեցրեցին վարկաբեկող, ահաբեկչական կոչեր, եւ անմիջապես ԱՄՆ գործող դեսպանը հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով զերծ մնալ եւ փորձել այնպես անել, որ նման երեւույթները ՀՀ-ում չլինեն: Եւ տեսանք, թե ինչ կատարվեց ժողովրդավար, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված, հավասար իրավունքների պաշտպանությանն ուղղված կոչին. եղավ ատելությամբ, խտրականությամբ եւ անհանդուրժող վերաբերմունքով մի երթ՝ ուղղված ԼԳՏԲԻ անձանց հավասար իրավունքների կիրարկման դեմ:

**- Արդյո՞ք նման ակցիաները, երթերը նորություն են:**

-Նման երթեր Հայաստանում եղել են: Մի քանի տարի առաջ, երբ հարձակվեցին երիտասարդների վրա, ովքեր կազմակերպել էին բազմազանության երթ: Կարող ենք հիշել DIY



ակումբի պայթյունը, որը կրկին մնաց չբացահայտված: «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ վրա է եղել առցանց գրոհ, մեր գործընկերոջ ավտոմեքենայի դիմապակին էին կոտրել, որից հետո մենք անմիջապես փորձեցինք ամբողջ գրասենյակի ապահովության հարցերը կարգավորել: Եւ ոչ միայն երթեր են եղել, այլ նաեւ եղել են սոցցանցերով եւ ՉԼՄ-ներով քարոզչություն՝ նման խնդիրներով զբաղվող ՀԿ-ների եւ անձանց հանդեպ: Ճատ լավ տեղյակ ենք «Իրավունք» թերթի կողմից գրեթե բոլոր համարներում նման կոչերին, Աժ պատգամավոր Հայկ Բաբուխանյանը կոչ արեց համապատասխան մարմիններին զբաղվել «Նոր Սերունդ» ՀԿ-ի հարցերով: Այսինքն, կարող եմ ասել, որ սա Նորություն չէ ՀՀ-ի համար: Եւ նման չբացահայտված հանցագործություններն են, անպատժելիությունն է, որ հանգեցնում է նրան, ինչին ականատես եղանք այդ ցույցի օրը: Այրել հասարակության լիիրավ անդամներ հանդիսացող խմբի խորհրդանիշ հանդիսացող դրոշը՝ նշանակում է լուրջ եւ վտանգավոր մարտահրավեր նետել ՀՀ Սահամանդրությամբ, օրենքներով եւ միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների իրացմանը, ինչը ժողովրդավարության սկզբունքների կասկածի լուրջ հիմքեր է ստեղծում:

**Դրոշ այրելուց հետո, Նախադեպային իրադարձությունների երկրորդ և կուլմիացիոն մասը ապահովեց ԼԳՏԻ դրոշն այրած քաղաքական գործիչներից մեկի՝ ԼԳՏԻ համայնքին պատկանելու մասին տեղեկությունը բացահայտող հաղորդագրությունն ու տեսանյութը՝ մարդու իրավունքների՝ մի շարք խախտումներով՝ սկսած մարդու անձնական կյանքի անձեռնամխելիությունից, վերջացրած անհանդուրժողականության ու ատելության դրսևորմամբ.**

17.11.2015

**ԼԳՏԻ ԴՐՈՇՆ ԱՅՐԱԾ ՌՈՒԲԵՐՏ ԱՅՐՈՆՅԱՆԸ ԼԳՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ե. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՏԵՍԱՆՅՈՒԹ)<sup>7</sup>**



«Բացահայտե՛նք հոմոֆոբ գեյերին» Նախաձեռնության անունից մամուլի հաղորդագրություն է ուղարկվել LGBTnews.am-ի պաշտոնական էլեկտրոնային հասցեին այն մասին, որ «Հայաստանի Սոցիալիստական շարժման» առաջնորդ Ռոբերտ Ահարոնյանը ԼԳՏԻ համայնքի ներկայացուցիչ Է: Հաղորդագրությանը կցված է նաև տեսանյութ:

««Հայաստանի Սոցիալիստական շարժման» առաջնորդ Ռոբերտ Ահարոնյանը, որը ակտիվորեն պայքարում է ԼԳՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքի և նրանց իրավունքները պաշտպանողների դեմ, իրականում ԼԳՏԻ համայնքի ներկայացուցիչ է:

<sup>7</sup> <http://www.lgbtnews.am/%D5%AC%D5%A3%D5%A2%D5%BF-%D5%A4%D6%80%D5%B8%D5%B7%D5%B6-%D5%A1%D5%B5%D6%80%D5%A1%D5%AE-%D5%BC%D5%B8%D5%A2%D5%A5%D6%80%D5%BF-%D5%A1%D5%B0%D5%A1%D6%80%D5%B8%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%AC%D5%A3/>

Կից տեսանյութում երևում է, թե ինչպես է նա գեյ ծանոթությունների համար նախատեսված կայքով ծանոթանում տղամարդկանց հետ՝ սեքսի նպատակով:

Ռ. Ահարոնյանը հաճախ է հայտվում տարբեր լրատվամիջոցներում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների առնչությամբ: Թեև 1,5 ամիս առաջ Ֆեյսբուքում նկարներ հրապարակվեցին նրա կողմնորոշման վերաբերյալ, սակայն վերջինս շարունակեց իր հոմոֆոբ բնույթի հայտարարություններն ու գործունեությունը: Նոյեմբերի 6-ին նա մի խումբ երիտասարդ տղաների հետ երևանում ԵՄ գրասենյանի դիմաց կազմակերպեց ակցիա ԼԳՏԻ անձանց դեմ՝ այրելով վերջիններիս խորհրդանիշ հանդիսացող ծիածանագույն դրոշը: Նկատի ունենալով այն, որ Ռոբերտ Ահարոնյանը հանրային գործիչ է և հանդես է գալիս կոնկրետ սոցիալական խմբի նկատմամբ ատելություն տարածող հայտարարություններով ու գործունեությամբ՝ լինելով այդ խմբի ներկայացուցիչ, մենք հրապարակում ենք այս տեսանյութը՝ հաշվի առնելով խնդրի հանրային կարևորությունը:

Կան նաև որոշ կասկածներ, որ Ռ. Ահարոնյանը և իր թիմակիցները, համացանցի միջոցով ծանոթանալով երիտասարդ տղաների հետ, նրանց կողմնորոշումը բացահայտելու սպառնալիքի տակ ստիպում են վերջիններիս միանալ իրենց նախաձեռնություններին ու կազմակերպած միջոցառումներին», - ասված է հաղորդագրությունում:

Ընթերցողին հիշեցնենք, որ առօրինակ՝ այլոց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հանրայնացումն առանց նրանց գիտության տարբեր պետություններում և տարբեր ժամանակահատվածներում ԼԳՏԻ անձանց իրավունքների պաշտպանության պայքարի միջոց է, որն ուղղված է բացահայտելու հատկապես հանրային գործիչների գործողությունների ու ԼԳՏԻ անձանց իրավունքների վերաբերյալ արտահայտած մտքերի անհամապատասխանությունը:

Ստորև ներկայացնում ենք տեսանյութը, որը խմբագրակազմը խորհուրդ չի տալիս դիտել 18 տարեկանից ցածր անձանց:

<https://www.youtube.com/watch?v=tkYXAYD5zxQ>

Ֆեյսբուքում այս թեմայով գրառումների պակաս չէր գրագվում.

Արսեն Օհանյան

2 hrs · Erevan · Edited ·

Որ ասում էի հոմոֆոբների մեջ լիքը գեյեր կան, չէիք հավատում: Մանավանդ էն կատաղած, փրփրած հոմոֆոբները, էն որ համ էլ կնատյաց են, հաստատ թաքնված գեյ են: Բայց հիմա չեմ պատրաստվում ծաղրեմ Роберт Агаронян-ին, որ հայտնի հոմոֆոբ, կնատյաց ֆաշիստ ա ու պարզվեց գեյ ա: Չէ ախպեր, ես իրան խղճում եմ, ինքը մեր իրականության զոհն ա: Ասեմ ոնց. մեր ժողովրդի մոտ ընդունված ա, որ ԼԳՏԻ-ն եղ այլասեռվածություն ա, այլանդակություն ա, ոչ բնական ա, ընդունված ա իրանց ատել, վառել/մոռթել/վտարելու կոչեր անել: Դրա հետևանքով ԼԳՏԻ-ի շատ ներկայացուցիչներ փորձում են զսպեն իրանց սեռական կողմնորոշումը, փորձում են հետեռնոսեքսուալ երևան, սկսում են պայքարել իրանց ֆիզիոլոգիայի դեմ, որի արդյունքում իրանց մեջ չարություն ա կուտակվում, քանի որ ֆիզիոլոգիայի դեմ ոչինչ չեն կարողանում անեն: Ինչքան շատ են պայքարում իրանք իրանց դեմ, էնքան ավելի են չարանում, քանի որ ֆիզիոլոգիան իրանն ա ասում, իսկ հանրային



կարծիքն ու դաստիարակությունը իրանը: Հիմա էս մարդը եթե ինքն իր հետ հաշտվեր, ընդուներ իրան ոնց կա, չէր պայքարի իր դեմ, \$աշիստ չէր դառնա ու էս սկանդալի մեջ չէր ընկնի: Հա, ու ասեմ, որ ոչ բոլոր \$աշիստ, անհանդուժողներն են թաքնված ԼԳՏԻ, կան նաև ուղղակի կացիներ, որոնք զուտ չիմացությունից ու հանրային կարծիքից են \$աշիստ դառել:

**Չուշացավ նաև իրավապաշտպան կազմակերպությունների ադեկվատ արձագանքը.**



18.11.2015 | ՓԻՆՔ ԱՐՄԵՆԻԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՉԵՐԾ ՄԱԼ ՌՈՒԲԵՐՏ ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ԴԵՄ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻՑ<sup>8</sup>

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն հայտարարություն է տարածել՝ կապված Հայաստանի սոցիալիստական շարժման ղեկավար Ռոբերտ Ահարոնյանի վերաբերյալ նախօրեին տարածված մամուլի հաղորդագրության՝ մամուլում հրապարակումների հետևանքների

վերաբերյալ:

«Հաշվի առնելով լրատվամիջոցների և հանրության հետաքրքրությունը Հայաստանի «սոցիալիստական շարժման» ղեկավար Ռոբերտ Ահարոնյանի մասնակցությամբ տարածված տեսանյութին, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ը՝ որպես ԼԳՏԻ անձանց իրավունքների պաշտպան կազմակերպություն, հայտնում է, որ որևէ առնչություն չունի տարածված տեսնյութի և այն երևան հանած «Բացահայտենք հոմոֆոբ գեյերին» նախաձեռնության հետ:

Այդուհանդերձ, ՀԿ-ն բոլորին կոչ է անում զերծ մնալ Ռոբերտ Ահարոնյանի դեմ հարձակումներից ու պախարակումներից՝ հիմք ընդունելով նրա սեռական կողմնորոշումը կամ սեռական վարքագիծը:

Թե՛ ԼԳՏԻ համայնքի ներկայացուցիչներին, թե՛ համայնքից դուրս մարդկանց «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն հորդորում է ըմբռնումով ու մարդկայնորեն մոտենալ կատարվածին: Աշխարհում բազմաթիվ մարդիկ են հայտնի, որոնք տառապել են ներքին հոմոֆոբիայով, այսինքն՝ չհամակերպվելով իրենց նույնասեռական կողմնորոշմանը, ինքնատեղությունը մղել են ԼԳՏԻ համայնքի այլ ներկայացուցիչներին դեմ (ավելի մանրամասն՝ տե՛ս հոդվածում):

Այդ մարդկանց մեղավորությունը չէ, որ նույնասեռական լինելով հանդերձ, նրանք պայքարում են ԼԳՏԻ համայնքի դեմ. պատճառը ԼԳՏԻ մարդկանց նկատմամբ հասարակության մեջ

<sup>8</sup> <http://www.lgbtnews.am/%D6%83%D5%AB%D5%B6%D6%84-%D5%A1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6%D5%AB%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B9-%D5%A7-%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A6%D5%A5%D6%80%D5%AE-%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AC-%D5%BC%D5%B8%D5%A2/>

արմատացած խիստ բացասական վերաբերմունքն է, ինչի արդյունքում շատ նույնասեռականներ իրենց փրկելու համար հոմոֆոբ արշավներ են իրականացնում:

Գիտակցելով Ռոբերտ Ահարոնյանի այժմյան խոցելիության աստիճանը, նրա խնդրային իրավիճակը՝ ՓԻՆԶ Արմենիան իր աջակցությունն է հայտնում նրան ու պատրաստ է սոցիալ-հոգեբանական օժանդակություն տրամադրել», - ասված է հաղորդագրությունում:



ՓԻՆԶ Արմենիան կոչ է անում զերծ մնալ Ռոբերտ Ահարոնյանի դեմ հարձակումներից

Չաշվի անելով լրատվամիջոցների և հանրության հետաքրքրությունը Չայաստանի «սոցիալիստական շարժման» ղեկավար Ռոբերտ Ահարոնյանի մասնակցությամբ տարածված տեսանյութին, Չանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՅԿ-ը (ՓԻՆԶ Արմենիա)՝ որպես ԼԳՏԲԻ անձանց իրավունքների պաշտպան կազմակերպություն, հայտնում է, որ որևէ անչլություն չունի տարածված տեսանյութի և այն երևան հանած «Բացահայտենք հոմոֆոբ գեյերին» նախաձեռնության հետ:

Այդուհանդերձ, «հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՅԿ-ն բոլորին կոչ է անում զերծ մնալ Ռոբերտ Ահարոնյանի դեմ հարձակումներից ու պախարակումներից՝ հիմք ընդունելով նրա սեռական կողմնորոշումը կամ սեռական վարքագիծը:

Թե՛ ԼԳՏԲԻ համայնքի ներկայացուցիչներին, թե՛ համայնքից դուրս մարդկանց ՓԻՆԶ Արմենիան հորդորում է ըմբռնումով ու մարդկայնորեն մոտենալ կատարվածին: Աշխարհում բազմաթիվ մարդիկ են հայտնի, որոնք տառապել են ներքին հոմոֆոբիայով, այսինքն՝ չհամակերպվելով իրենց նույնասեռական կողմնորոշմանը, ինքնատելությունը մղել են ԼԳՏԲԻ համայնքի այլ ներկայացուցիչների դեմ (ավելի մանրամասն՝ [տե՛ս հոդվածում](#)):

Այդ մարդկանց մեղավորությունը չէ, որ նույնասեռական լինելով հանդերձ, նրանք պայքարում են ԼԳՏԲԻ համայնքի դեմ. պատճառը ԼԳՏԲԻ մարդկանց նկատմամբ հասարակության մեջ արմատացած խիստ բացասական վերաբերմունքն է, ինչի արդյունքում շատ նույնասեռականներ իրենց փրկելու համար հոմոֆոբ արշավներ են իրականացնում:

Գիտակցելով Ռոբերտ Ահարոնյանի այժմյան խոցելիության աստիճանը, նրա խնդրային իրավիճակը՝ ՓԻՆԶ Արմենիան իր աջակցությունն է հայտնում նրան ու պատրաստ է սոցիալ-հոգեբանական օժանդակություն տրամադրել:





**ՀՔԱ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
ՋԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱՐԱԾԵԼ ՌՈՒԲԵՐՏ  
ԱՐԱՐՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<sup>9</sup>**

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հայտարարություն է տարածել Սոցիալիստական շարժման ղեկավար Ռոբերտ Ահարոնյանի գործողությունների վերաբերյալ: Հայտարարությունը ներկայացնում ենք ստորև:

«Հայաստանի «սոցիալիստական շարժման» ղեկավար Ռոբերտ Ահարոնյանի վերաբերյալ տեղեկատվության տարածումից հետո ծավալված քննարկումներն ու գործողությունները ևս մեկ անգամ փաստեցին, որ ԼԳՏԲԻ անձանց նկատմամբ ատելությունը հանրության կողմից, ցավոք, ընկալվում է որպես միակ ընդունելի վերաբերմունք:

Մինչ այժմ Ռոբերտ Ահարոնյանի կողմից ատելության ու բռնության կոչերը պատշաճ գնահատականի չէին արժանանում իրավապահ մարմինների կողմից՝ չնայած, որ դրա համար կային բոլոր իրավական հիմքերն ու փաստերը: Իսկ իր սեռական կողմնորոշման բացահայտումից հետո էլ պարոն Ահարոնյանը ոչ թե զղջում է իր հոմոֆոբ գործողությունների համար, այլ հրապարակային սպառնալիքներ ու մեղադրանքներ է հնչեցնում և նույնիսկ այցելում տարբեր մարդկանց տներ, ովքեր Ֆեյսբուք սոցիալական ցանցի իրենց էջերում տարածել են իր մասնակցությամբ հայտնի տեսանյութը:

Կոչ ենք անում ՀՀ Ոստիկանությանը անհապաղ միջոցներ ձեռնարկել Ահարոնյանի ապօրինի գործողությունների և հրապարակային սպառնալիքների վերաբերյալ, որոնք ինքնիրավչություն են և անձի տեղեկատվություն տարածելու իրավունքի նկատմամբ ոտնձգություն են հանդիսանում: Միաժամանակ շեշտում ենք, որ Ռոբերտ Ահարոնյանի սպառնալիքների թիրախ անձանց անվտանգության չապահովումը կոփտարկվի որպես ՀՀ Ոստիկանության կողմից այդ բռնությունների ուղղակի աջակցություն»:

**Այս ծաղրանկարը լավագույնս ներկայացնում է ՀՀ –ում և առցանց տարածքում մարդու՝ այս դեպքում ԼԳՏԲԻ համայնքի ներկայացուցչի իրավունքների, ազատությունների, ոտնահարումների, անհանդուրժողականության և ատելության դրսևորման իրական վիճակն ու ձևաչափը:**

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ատելության դրսևորման և մարդու իրավունքների



<sup>9</sup><http://www.lgbtnews.am/%D5%B0%D6%84%D5%A1-%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B1%D5%B8%D6%80%D5%AB-%D5%A3%D6%80%D5%A1%D5%BD%D5%A5%D5%B6%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9/>

ոտնահարման դեպքերը ՀՀ առցանց տարածքում կիրառվում են ոչ միայն LQSF-ի համայնքի ներկայացուցիչների, այլև նրանց հիմնախնդիրներով զբաղվող իրավապաշտպանների նկատմամբ: Նրանք հաճախ որակվում են «դավաճաններ, ազգի ու պետության թշնամիները» ստորև՝ medialab.am-ի հոդվածն այս մասին:

### **«Ազգի ու պետության թշնամիները». ինչերի միջով են ստիպված անցնել իրավապաշտպանները Հայաստանում**

Երբ անցած տարի «Իրավունք» թերթը հրապարակեց աղմկահարույց «ազգի և պետության թշնամիների սև ցուցակը», ցուցակում ընդգրկված իրավապաշտպան Արման Սահակյանը իր մեքենայի ապակիները կտորված հայտնաբերեց:



«Իրավունքի» խմբագիր Ջովհաննես Գալաշյանը

կոչ էր արել ցուցակում ընդգրկված 60 անձանց (լրագրողների, արվեստագետներ, ակտիվիստներ, իրավապաշտպաններ) չբարևել, որևէ հարցում չօգնել, աշխատանքի չվերցնել կամ հեռացնել պետական ծառայությունից, նրանց նկատմամբ զրո հանդուրժողականություն ղրսևորել, քանի որ նրանք «ազգի և պետության թշնամիներ են ու զոմբիներ»:

«Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության ներկայացուցիչը «Մեդիալաբին» ասում է՝ Հայաստանում տարբեր աստիճանի ու բնույթի սպառնալիքները սովորական բան են խոցելի խավերի պաշտպանությամբ զբաղվող մարդկանց համար:

«Նոր Սերունդի» դեմ սպառնալիքները նոր թափ ստացան նաև վերջերս, երբ Գերմանիայի դեսպանատունը հայտարարեց, որ ՀԿ-ին 30 հազար եվրո է տրամադրում ամսվա՛ն 15 անօթևան միասեռական անձանց համար ապաստանի ստեղծման, անվճար իրավախորհրդատվության համար:

«Վառել, քանդել, ջարդել, սպանել, կախել, մի օր ծենգավիթում կընկնեք 30 հազարանոց ավտոյի տակ...»,- ստացած թարմ սպառնալիքներ է թվարկում երիտասարդ իրավապաշտպանը:

Երբ խնդրում եմ պատմել ստացած սպառնալիքների մասին, աշխատանքային ավելի երկար տարիների փորձ ունեցող Արթուր Սաքունցը հոգոց է հանում, հետո կատակում՝ «Էլ ո՞րն ասեմ, Էլ որը՞»: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավարը, այնուհանդերձ, առանձնացնում է 2012-ի ապրիլին այդպես էլ չկայացած ադրբեջանական ֆիլմերի փառատոնի ժամանակ տեղի ունեցած հարձակումը: Կազմակերպության գրասենյակը այն ժամանակ մի խումբ անձանց կողմից քարերով, ձվերով հարձակման էր ենթարկվել՝ ֆիլմերի ցուցադրությանը տարածք տրամադրելու համար:

«Դա ամենաարտառոցն էր, երբ տեղական մարմինները իրավապահ մարմինների աջալուրջ հսկողությամբ այդ հարձակումը գործեցին, որի վերաբերյալ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները արտահայտվեցին և դա որակեցին հարձակում իրավապաշտպան կազմակերպության վրա ու պահանջեցին իշխանություններից, որպեսզի ապահովեն արտահայտման ազատությունը», - ասում է Սաքունցը:

Հայաստանում իրավապաշտպաններին, տարբեր հասարակական կազմակերպություններին քննադատողները իրենց բանավեճում հիմնական շեշտը դնում են «արևմտյան փչացած, կեղծ, այլասերված արժեքները» Հայաստանում տարածելու վրա, կանանց հարցերով զբաղվող իրավապաշտպաններին էլ շատ հաճախ անվանում են ընտանիք քանդողներ, երբ վերջիններս բարձրաձայնում են ընտանեկան բռնության դեպքերի մասին կամ պաշտպանում բռնության գոհերին:

«Մոռանում են, որ այդ ընտանիքը արդեն իսկ ներսից արդեն քանդված է, եթե այնտեղ բռնություն կա», - նկատում է «Կանանց ռեսուրսային կենտրոնի» ղեկավար Լարա Ահարոնյանը:

Արման Սահակյանն էլ ասում է՝ Հայաստանում յուրաքանչյուր իրավապաշտպան գործունեություն դեռևս անվտանգ չէ. - «Եթե այդ գործունեությունը դուրս է գալիս նորմայի սահմաններից, տրադիցիոն հասկացողություններից, կարծրատիպ ես կոտրում, որոշակի անձանց, ազգայնամոլ կուսակցությունների համար դու դառնում ես թշնամի, պատվեր կատարող, դրսից ուղարկված մարդ»:

Սահակյանն, ի դեպ մեկն է այն երեք հայցվորներից, որ երկու ամիս առաջ առաջին ատյանում շահեցին Հանրապետական խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանին պատկանող «Իրավունք» թերթի դեմ հայցը՝ աղմկահարույց «սև ցուցակի» գործով: «Իրավունքը» դատարանի որոշմամբ պետք է 250 հազարական դրամ վճարի «Նոր Սերունդ» ՀԿ-ի երեք անդամներին՝ նրանց պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու համար: (դրանից առաջ նույն ցուցակի պատճառով 16 քաղաքացիներ էին դիմել դատարան, սակայն նրանց հայցը մերժվել էր և առաջին ատյանի, և վերաքննիչ դատարանում):

«Ազգի և պետության թշնամիների» ցուցակը կազմած Հովհաննես Գալաջյանը համաձայն չէ վճռի հետ, դիմել է Վերաքննիչ դատարան և պնդում է, որ դատարանը խոսքի ազատության դեմ որոշում է կայացրել:

«Ծոծրակներդ կտեսնեք, բայց ներողություն չեք տեսնի՝ անկախ նրանից, թե ինչպես կլինի ընթացքը հաջորդ ատյանում», - ասում է Գալաջյանը:

«Նոր Սերունդը» ևս դիմել է Վերաքննիչ՝ վիճարկելով գումարի չափը և պահանջելով ճանաչել խտրականության և ատելության խոսքի հրահրման փաստը:

Իրավապաշտպաններին շատ է մտահոգում այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցող Հայաստանում ատելության խոսքի տարածումը կարող է ավելի ու ավելի բորբոքվել, ինչպես միությունը գլխավորող Ռուսաստանում, որտեղ Արևմուտքի հետ սրված հարաբերությունների պատճառով հաճախ են թիրախավորվում տեղում գործող արևմտյան իրավապաշտպան կազմակերպությունները:

«Քանի դեռ Վլադիմիր Պուտինը ունի իր պլանը այդ հարձակումներին և իր խմբերին ուղղություններ տալու, ու քանի դեռ այս ռեժիմում ու համակարգում ենք ապրում, դրանք, իհարկե, կշարունակվեն», - համոզված է «Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք» ՀԿ-ի ներկայացուցիչ Մամիկոն Յովսեփյանը:

Ռուսաստանում իրավապաշտպանների և ՀԿ-ների նկատմամբ վերաբերմունքը սկսել է սողոսկել նաև հայկական իրականություն, մտահոգություն է հայտնում Սաքունցը:

Ռուսաստանում վերջերս ընդունվել է հասարակական կազմակերպությունների մասին վիճահարույց մի օրենք, համաձայն որի՝ եթե կազմակերպությունը ինտերնետում, լրատվամիջոցներով նյութեր է տարածում առանց նշելու, որ հեղինակը՝ «ոչ առևտրային հասարակական կազմակերպությունն օտարերկրյա գործակալ է», արդարադատության նախարարությունը կարող է դիմել դատարան և տուգանել անհատներին՝ 100-300 հազար ռուբլու չափով (մոտ 1700-5200 դոլար), իսկ իրավաբանական անձանց՝ 300 հազար ռուսական ռուբլուց 1 միլիոնի չափով (մոտ 5200-17 000 դոլար):

Հայաստանում արդեն իսկ սկսել են կոչեր հնչել ՀԿ-ների գործունեության սահմանափակումների վերաբերյալ: Օրերս Միջազգային հումանիտար զարգացման ՀԿ-ն հայտարարեց, թե բացահայտել է մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանում գունավոր հեղափոխություն իրականացնելու համար: Այս ՀԿ-ի կազմած ցուցակում են ընդգրկվել տասնյակ կազմակերպություններ են, այդ թվում՝ «Եվրասիա-համագործակցություն» հիմնադրամը, «Բաց Հասարակության Հիմնադրամներ / Հայաստան» կազմակերպությունը, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն, «Ապագան քոնն է» ՀԿ-ն, «Կանանց աջակցման երևանյան կենտրոնը», «Կանանց ռեսուրսային կենտրոնը» և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն: Կազմակերպության ղեկավար Արման Դուկասյանը նույնիսկ առաջարկում է պետության վերահսկողության միջոցով վերջ դնել հասարակական կազմակերպությունների չվերահսկվող աճին՝ «անվտանգության ապահովման և Հայաստանի շահերի պաշտպանման նպատակով»:

«Անհրաժեշտ է ՀԿ-ների գործունեությունն ուղղել դեպի հասարակության համար կարևոր խնդիրների լուծմանը, ինչպես նաև համակարգ մշակել, որը թույլ չի տա արտաքին ուժերին ազդել ներքին սոցիալական և քաղաքական կյանքի վրա տարբեր հասարակական կազմակերպությունների և սոցիալական շարժումների գործունեության միջոցով», - ասել է Ղուկասյանը (<http://sputnik.co.am/armenia/20150718/192198.html>):

«Սպառնալիքները առավել քան առարկայական են դառնում», - ասում է Սաքունցը, - «մեզ մոտ ՀԿ-ների գործունեության մասին օրենքի նախագիծ էր պատրաստվել, որը փոխվեց, այդ նախագիծը սպառնալիքներ այլևս չի պարունակում, բայց դեռևս կառավարությանը, ԱԺ-ին չի ներկայացվել: Արդարադատության նախարարը փոխվեց, իսկ մեզ մոտ քանի որ համակարգը կայացած չէ, ավելի շուտ կանխատեսելի է անձերի վարքագիծը, քան համակարգի: Այս դեպքում ԱԺ-ում օրենքի նախագծի ճակատագիրը կախված կլինի քաղաքական իրավիճակից, մասնավորապես, Հայաստանի իշխանությունների վրա ռուսական ազդեցության աստիճանից: Իսկ ես տեսնում եմ, որ այդ աստիճանը գնալով մեծանում է, որ գնալով զուտ ներքաղաքական, ներիրավիճակային խնդիրների լուծման վրա է տարածվում»:

Մինչդեռ Հայաստանի իշխանության բարձրագույն ներկայացուցիչները բավականին հաճախ են Հայաստանի կայացման գործում շեշտում քաղաքացիական հասարակության

դերակատարությունը: Վերջին օրինակը թերևս նախագահ Սերժ Սարգսյանի ելույթն էր՝ ուղղված էլեկտրաէներգիայի թանկացման դեմ պայքարող երիտասարդներին:

«Այո՛, ժողովրդավարության ուղին, քաղաքացիական հասարակության կայացման ուղին բարդ և խորդուբորդ է, սակայն դեպի ժողովրդավարություն տանող ուղուն մեր երկիրն այլընտրանք չունի: Այս մասին վերջին տարիների ընթացքում մենք մեկ անգամ չենք խոսել: Այս խորդուբորդ ու ոլոր ճանապարհով պիտի ընթանանք բոլորս», - ասել էր նախագահ Սարգսյանը:

Սաքունցը, սակայն, նկատում է՝ երբ հարձակումների, ատելության խոսքի թիրախի տակ են հայտնվում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, իշխանության ներկայացուցիչները իրենց հրապարակային դիրքորոշումներում չեն քննադատում, ավելին՝ նույնիսկ լռության են մատնում, իսկ որոշ դեպքերում՝ հովանավորում են ատելության խոսքը տարածողներին:

«Կարող եմ ասել, որ իշխանությունները կամ հրապարակավ կամ լռությամբ աջակցում են ատելության խոսքի տարածմանը, հակված չեն հաշվետու ժողովրդավարական իշխանավարության: Քննադատությունները ընկալվում են որպես քննադատություն սեփական անձի նկատմամբ, անձնավորում են, և այդ անձնավորման պարագայում ինստուտիցոնալ դաշտը, որն ամենաբնորոշն է ժողովրդավարական իրավիճակին ու պետությանը, վերանում է», - ասում է իրավապաշտպանը:

Նաիրա Գևորգյան, նկարը՝ Վահե Ներսեսյան

© Medialab.am <http://medialab.am/news/id/6656>

**ՀՀ առցանց տարածքում հայտնվում են ատելության խոսքի, անհանդուրժողականության դրսևորումները, իրական կյանքից: Ստորև բերված նյութի առաջին մասը ներկայացնում է ԼԳՏԲԻ համայնքի նկատմամբ հանդուրժողականության բացակայությունն ու իրավունքի անպաշտպանվածությունը, իսկ վերջին պարբերությունը 2ԼՄ –ի բացահայտ, և փաստորեն պետականորեն խրախուսվող ցինիզմը՝ ԼԳՏԲԻ համայնքի և նրանց շահերը պաշտպանող իրապաշտպանների հանդեպ .**




### «ԻՐԱՎՈՒՆՔԸ» ՀԱՂԹԵՑ ՀԱՄԱՍԵՌԱՄՈՒՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ

Քիչ առաջ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ռ. Ափինյանը հրապարակած վճռով «Իրավունքը» հաղթեց համասերամուլների լռեհնգով զբաղվող պաշտպաններին: Մասնավորապես վճռում նշվում է. «Նոր Սերունդ» մարդասիրական հկ-ից հոգուստ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ եւ Իլոնա Ազարյանի՝

ներողություն խնդրելուն, դատական ակտը մասնակի հրապարակելուն եւ պատճառված վնասը փոխհատուցելուն պարտավորեցնելու մասին հայցը մերժել:

Հիշեցնենք, որ համասեռամուլիների լոբիստները իբր վիրավորվել էին «Իրավունք» թերթում «Երբ համասեռամուլների գրանտաձիժ պաշտպաները պետական աջակցություն են ստանում» հոդվածից<sup>10</sup>:

Հայաստանում և ՀՀ առցանց տիրույթում շարունակում են «համասեռամուլների պաշտպաններին» հաղթել, ԼԳՏԻ համայնքի ներկայացուցիչներին հանրության լիիրավ անդամ ընդունելու փոխարեն:



1. Ուսաումնասիրման ժամանակահատվածում հրապարակված նյութերի 70%-ը պարունակում են բացասական վերաբերմունք, ատելության խոսքի դրսևորում և մարդու իրավունքների ոտնահարում՝ ուղղված ԼԳՏԻ համայնքի ներկայացուցիչներին և նրանց շահերը պաշտպանող, կամ հանդուրժողականության դրսևորումներ ցուցաբերող անձանց ու կազմակերպություններին:


2. Ուսաումնասիրման ժամանակահատվածում հրապարակված նյութերի 20%-ը Պարունակում են համեմատաբար չեզոք տեղեկատվություն: Դրանք հիմնականում արտասահմանյան ՉԼՄ-ներից թարգմանված նյութերն են, հիմնականում ռուսական լրատվամիջոցներից:

3. Ուսաումնասիրման ժամանակահատվածում հրապարակված նյութերի 10%-ը Հայաստանյան ԼԳՏԻ համայնքի հիմնախնդիրների մասին, իրական հերոսներով և իրական փաստերով հրապարակումներն են:

Այս 10%-ի 50%-ը հասարակական կազմակերպությունների կողմից տարածվող հաղորդագրություններն ու նյութերն են:

<sup>10</sup> [http://iravunk.com/index.php?option=com\\_content&view=article&id=31546%3Alr-&catid=41%3Alurer&Itemid=57](http://iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=31546%3Alr-&catid=41%3Alurer&Itemid=57)

**ԼԳՏԻ համայնքի վերաբերյալ թեմաների շրջանառությունը  
ՀՀ առցանց տարածքում**



- Զուևիս- Զուլիս **«Էլեկտրիկ Երևան»**
- Զուլիս – նոյեմբեր **«Սահմանադրական խառնաշփոթ»**
- Զուևիսից – նոյեմբեր **ԼԳՏԻ նորությունների ընթացք**
- Զուլտեմբեր- նոյեմբեր Նախադեպային իրադարձություններ – /ԼԳՏԻ անձանց շահերի պաշտպանությանը նվիրված ֆորում, ԼԳՏԻ դրոշի այրում, ԼԳՏԻ դրոշն այրող քաղաքական գործչի՝ ԼԳՏԻ համայնքին պատկանելու մասին տեղեկության շահարկում/:

**Այս առցանց հետազոտությունը ցույց է տալիս, որ ՀՀ –ում ԼԳՏԻ համայնքի ներկայացուցիչների իրավունքները դեռ չեն դիտարկվում որպես ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ:**

- Սույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԼԳՏԻ համայնքի հետ առնչվող թեմաները արժարժվում են ` զուգորդվելով հանրային կարևորություն ունեցող գործընթացների հետ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում դրանք ուղիղ համեմատական կերպով ակտիվանում էին քաղաքական և քաղաքացիական գործընթացներին զուգահեռ: Սա մի կողմից խոսում է այն մասին, որ ԼԳՏԻ համայնքը հանրության բաղկացուցիչ մաս է, մյուս կողմից` փաստերը ցույց են տալիս, որ թեման շահարկվում է տարբեր ուժերի կողմից իբրև խայծ ` հանրության ուշադրությունը շեղելու համար:
- ԼԳՏԻ համայնքի նկատմամբ ատելության խոսքն ու անհանդուրժողականության դրսևորումը կարելի է ասել ունենում է գրեթե պետական հովանավորչություն` խրախուսվելով պատգամավորների և այլ պաշտոնյաների կողմից, ընդհուպ մինչև մարդու իրավունքներ ոտնահարող, խտրականություն և անհանդուրժողականություն պրոպագանդող ՉԼՄ –ներկայացուցիչներին` պետական մրցանակներ շնորհելը երկրի նախագահի կողմից:
- Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրական տեղաշարժ է նկատվում առցանց տարածքում ԼԳՏԻ համայնքի հիմնախնդիրների վեր հանման, հավաստի տեղեկատվության և իրական փաստերի տարածման առումով` ԼԳՏԻ համայնքի շահերը պաշտպանող կազմակերպությունների հասարակայնության բաժինների ճիշտը աշխատանքի /ՅԿ-ների հաղորդագրություններ/ և առցանց տիրույթում հայտնված ` LGBTnews.am էլեկտրոնային լրատվական կայքի հետևողական գործունեության շնորհիվ /Կայքը գործել է 2014թ.-ի հուլիսից, իսկ նախորդ ուսումնասիրությունն արվել էր մինչ 2014թ. –ի հունիս ամիսը կայքի գործունեությունն ակնառու էր ուսումնասիրությունները համեմատելիս/ :

**«Հակախտրականության մասին» օրենքի բացակայություն** . ՀՀ առցանց տիրույթում արտացոլվում է ԼԳՏԻ համայնքի նկատմամբ իրական պատկերը առավել խիտ երանգներով, քանի որ այստեղ անձի ինքնությունը հեշտ է թաքցնել, հեշտ է նաև պատասխանատվությունից խուսափել, պատասխանատվությունից հեշտորեն խուսափում են հաճախ ՉԼՄ-ները` հատկապես կայքերի` բլոգ բաժիններով տարածելով շատ հաճախ ոչ իրական/Ֆեյք/ անձնական էջերում այս կամ այն աղմկահարույց տեղեկությունը: Մեկ բան է, երբ քաղաքացին է դրսևորում իր կարծիքը և տեսակետը, մեկ այլ բան երբ ՉԼՄ-ն ոչ թե ներկայացնում է տարբեր տեսակետներ այլ ` ապատեղեկատվություն, խտրական դրսևորում , ատելության խոսք:

«Հակախտրականության մասին» օրենքի մասին հանրության մեջ կան սխալ կարծրատիպեր, երբ այս թեման քննարկվում է, դրսևորվում է խիստ կարծրատիպային մոտեցում շատերն ասում են, որ ուզում են նույնասեռականությունը տարածվի, հայ մարդու արժեքներն ու երկիրը, հայ մշակույթը կորցնենք, ինչն իրականում սխալ պրոպագանդայի արդյունք է , քանի որ շատ բաներ սխալ է ներկայացվում զլմ-ների



կողմից թե ինչ է խտրականությունը, խտրական վերաբերմունք նույնասեռականների վերաբերյալ և այլն :

Հակախտրականության մասին օրենքի բացակայությունը հնարավորություն է ընձեռնում յուրաքանչյուր քաղաքացու, ՉԼՄ-ների խախտելով խոսքի, կրոնի, անձնական կյանքի անձեռնամխելիության և այլ մի շարք օրենքներ վիրավորել ԼԳՏԲԻ համայնքին , ոտնահարել մի շարք իրավունքներ :

Ասուլիս օրենքի կարևորության մասին.

<http://media-center.am/hy/1448385226>

## Առաջարկներ

1. Շարունակել բարձրացնել ԼԳՏԲԻ հիմնախնդիրների տեղեկացվածության բարձրացմանն ուղղված աշխատանքները՝ առցանց հարթակների միջոցով:
2. Հատուկ աշխատանք տանել ՉԼՄ ներկայացուցիչների հետ՝ ԼԲԳՏ անձանց հիմնախնդիրները անաչառ ներկայացնելու ուղղությամբ:
3. Մեծացնել Հայաստանում «Հակախտրականության մասին» օրենքի ընդունման ուղղված աշխատանքները:



## Հավելված 1

Չետագոտությունը կազմվել է 6 ամիսների ընթացքում, մոտ 50 ՉԼՄ աղբյուրներից /հիմնականում հայկական կայքերի, թերթերի հեռուստատեսությունների և ռադիոալիքների կայքերի / կամ տարբեր ՉԿ-ների կայքերից համացանցում հայտնվող կամ համացանցից ՉԼՄ հարթակ տեղափոխվող նյութերի հիման վրա: Հաճախ սոց.ցանցերից որևէ նյութ տարածվում է ՉԼՄ-ներում, ապա, որպես ՉԼՄ նյութ, կրկին վերադառնում սոց. ցանց ` նոր թեմատիկ զարգացումներ ապրելով:

Ուսումնասիրվել է մոտավորապես 8 000 գրառում և առցանց հրապարակում /հոդվածներ, տեսանյութեր, լուսանկարներ, կոլաժներ, և դրանց առնչվող գրառումներ/:

Չետագոտման ցանկում ներառվել են այն նյութերն ու գրառումները, որտեղ ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի, հանդուրժողականության կամ ատելության խոսքի դրսևորումներ, իրավունքի ոտնահարումներ են նկատվել: Չետագոտությունում ընտրված նյութերը, առցանց տարածքում առկա իրավիճակներն ու տեսակետները ամենից ակնառու կերպով ներկայացնող մոտեցումներն են:

ՉԼՄ-ների հանդուրժողականության ցանկ չի կազմվել, քանի որ այն Հայաստանում ունի շատ անհատական մոտեցում, որտեղ հաճախ ՉԼՄ-ների սեփականատերերն են փոխվում, կամ փակվում են/կայքերի դեպքում հաճախ են փակվում/ , կամ խմբագիրների փոփոխությունը, օրինակ կարող է հանգեցնել հանդուրժողականության ու անհանդուրժողական դրսևորումների կտրուկ փոփոխման: Կան ՉԼՄ-ներ, որոնց անհանդուրժողականությունը պայմանավորված է խմբագրի անձնական անհանդուրժողականությամբ ու վերջին երևույթի ` պետական հովանավորչությամբ: Չետագոտությունն իրականացնելիս Նման և այլ բազմաթիվ տեղական հանրությանը բնորոշ նրբություններ են հաշվի առնվել:



**«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ**  
Բաղրամյան 49, բն. 7 | Երևան 0019 | Հայաստան  
E-mail: [newgenerationngo@gmail.com](mailto:newgenerationngo@gmail.com) | <http://ngngo.net>

Երևան, Հայաստան  
2016թ.